26

# ՅՈՎՀԱՆՆՈՒ ԻՄԱՍՏԱՍԻՐԻ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՅՈՑ ՕՁՆԵՑՒՈՅ

# ՃԱՌՔ

Ընդդէմ երեւութականաց :

Նախ պատճէնն 'ի լոյս ընծայեալ Լատին թարգմանութեամբ՝ ընդ հին օրինակին եղելոյ 'ի մեծ գրատան Փարէզու :

Համդերձ յառաջաբանիւ հետեւորդ ծանօթութեք Հ. Մկրտիչ Վարդապետի Աւգերեան, 'ի միաբանութենէ ամենապատիւ Տն Մխիթարայ մեծի Աբբայի :

Հրամանաւ Գերյարգոյ Տն Ստեփաննոսի Աբբայի եւ Ածապատուի Արքեպիսկոպոսի :

'Ի Հայրապետութեան Տեառն Դանիէլի Հայոց Կաթողիկոսի :

Ռ Կ
Վ Ա

A/828

1807. ՌՄԾԶ :

'Ի ՎԵՆԵՏԻԿ
'Ի Վանս Սրբոյն Ղազարու :

[illegible]

[illegible]

# ԱՌ ԸՆԹԵՐՑՈՂՍ:

Ահա եհաս ժամ, զի կատարեսցի այն՝ որ ասացն, զխոստացեալս եմ կատարեցից, և որ արհամարհեն զես՝ անարգեսցի: Ոչ է որ սքանչելին է 'ի նմանէ եւր, և պահէ զամ սակերս նոցա, մինչև չհորինելոց և ո՛չ մըոյ 'ի նոցանէ, նոյն պահեալ անէն յանդիման փեղե-րաց զյաւերժական յեղափոխեալ արծանէ զհայրապետն մեր Յովհաննու իմաստասէր օձնեցի 'ի բազմապատիկ բան-բասանաց. և կատարեալ զնա 'ի հասեալ ժամու եերև զսերապես կատարեալ եար ճշմարիտ տծաւե-նութե, անհորդեալ պահելով 'ի հարապատութե ող-ջախոհ դաւանութե զնշխարս պանծալի գրուածոց Տեառն Յովհաննու իմաստասիրի և կաթո-ղիկոսի Հայոց Օձնեցւոյ ընդդէմ երևութա-կանաց: Եւ որ պահեալն մինչև ցայժմ, նոյն ենթն յաջողեալ մեզ գտանել զայս գանձ ծածկեալ յազգա-րանէ, (որում և ցանկայեն 'ի բազմաց հետէ տմ ճշմար-տասէրք.) և եթ զնոյն սփռել 'ի վայելչութի մանկանց եկեղեցւոյ:

Այս մեր ուղղափառական մեծմասր հայրապետս՝ որում և վկայեն նախնիք մեր, ո՛չ միայն ջատագովեալ է գլխաւոր անգլուխ աղանդաւորաց՝ Թղմաճեաց ու եւս ծողողեցն խաղհեղանէ, և սքանչելի աղացոյց ողջմտութե և ուղղափառութե հեղինակի նր, այլ և է վերջին աղացոյց և պահէլ հարապահեն ցուցակա-նութեց արդիւնաւոր Տեառն Յ. Մխիթարեան վարդա-պետ Չամչեանց 'ի նորին պատմութե Հայոց (Հատ. Բ. եր. 387 = 398, և 571 = 672.) 'ի սխալանս անչէն և վարդապետութե ասեն մեծ: Այժմ ծաղ-կեցաւ և պտղաբեր եղև աշխատասիրութե նորա. և

որպէս զօրացաւ՝ զոր նա կալաւ՝ կողմն ճշմարտութե ,
նոյնպէս և թշնամւոյն պահանջեաց զնէն եղաւ : Մինչ
չէ աւելորդ է այլև ասել ինչ, բայց միայն թող զայս
գործ 'ի յետս ճշմարտասիրաց, զի վերծանեսցեն և
տեսցեն զհնոյութե ճշմարտութե :

Նա՝ որ մեծն է՝ թող երաշխաւորեսցեն զայսն ընդ սըրբ-
բնագիրս տումարի սոյն շևանի և սահմանի ըը ծողո-
վոյն ժողովեգոնի՝ (զորս ձեռըր մի յաստաշ 'ի լոյս ընծայե-
ցաք), և տեսցեն՝ թէ զիարդ միաձայնի ընդ նմին
վաւերականութե այս իմաստասիրին : Մինչ զի եթէ
երկեամ մի յաստաշ 'ի յետս անկեալ էր մեր այս ճառ,
բաղում ինչ ունէաք ընդօրինակել և դնել 'ի կարգի
վկայութեց՝ որք եդան 'ի հաստատութե նախանշանա-
կեալ տումարի և սահմանի . բայց քանզի յետ տպա-
գրութե նորին եղև մեզ 'ի յետս բերել զայս ճառ,
ո՛չ ինչ կարացաք առաւ անդր յառելուլ . այլ՝ ուրոյն
եւս զաս տպագրել հարկ համարեցաք, բերելով անդ
այսր ինչ ինչ համառօտս 'ի ծանօթութե կարգի :

Մեծ կազմութե եանէց, և շարագրութե եառեւ այսր
ճառի՝ այնպէս ունի աղփակցութե ընդ այլ գրուածս
իմաստասիրին, մինչև եթէ օրէն է ասել՝ և հարկաւորէ
իսկ տեսութե որոց հմտացն են յայտնի, նոյնութե յա-
ւէտ՝ քան եթէ նմանութե նշմարել 'ի բառսն և 'ի շա-
րադասութես նոցա . Բազում զհաւեշտաբանս յետ ընդ
այլև այլ համեմատանաց իմաստեցն յաւէտ կամ նուազ
յաճախեալս :

'Ի տպագրութես զամ զգուշութե 'ի գործ արկաք ըստ
ընդ հաստատութե, մինչև և զյայտնի վրիպակս
ինչ գրչի (յորոց էՙ մարթ գիւտ լինել զինչ
և եղէ գրչագիր մատենին՝) 'ի ծանօթութես անդ նշա-
նակեցաք, զուղեցն եդեալ 'ի կարգին ըստ պահանջե-
լոյ իմաստից : Այլ ո՛չ ինչ փոփոխութե եղև առ 'ի
միայն՝ բայց ըստ այժմու ուղղութե դնել զտառն օ
փոխանակ աւ մասնկան, որով վարին ամ հին գրչա-
գիրք,

գիրք , որպէս և օրինակագիրքն այսր ճառի · ևս և շնորհասանշանաւն է , զոր ո՛չ 'ի գործ ածէին գրչա-գիրք : Օ այլ նշանակս հնագրութե՛ ըստ որում և էին , անփոփոխ պահեցաք՝ մինչև ցշեշտս անգամ :

Իսկ օրինակ ձեռաց առաք 'ի մեծ գրատանէ վարժա-րան՝ ընտիր և 'ի հաւաստական օրինակէ գործոյ , որ գաղափարեալ է զնա 'ի սկզբանց անապատին՝ որն է վանք Լամբրոնացւոյն , 'ի ձեռնէ անոր՝ զոր է յեւրեին ունէին , և յարկէեցս գրոց եւրեանց պահէին սբն Գրե-գոր Վկայասէր՝ մեծն և փոքրն , սբն Ներսէս Կլայեցի , սբն Ներսէս Լամբրոնացի , և Գրիգոր Խաղողեկոս նա-կանոսն ազգոյ , զորոց շնորհալութեան քեզաւք աստանօր :

# ՎԿԱՅՈՒԹԻՒՆՔ
## ՆԱԽՆԵԱՑ

*Յաղագս Յովհաննու Իմաստասիրի Օձնեցւոյ՝ հեղինակի ճառին՝ որ ընդդէմ երևութականաց :*

### ԳՐԻԳՈՐԻ ՎԿԱՅԱՍԻՐԻ :

Օ՛ Վեհայական յիշատակարան նորա՝ զի՞ այսր ճառի , ո՞չ գտանեմք աստանօր , որով հնեալ գրեալ է այն 'ի վերա-ձայն գործոյս , նաև քան զյիշատակարան վերջին գրողին · տես անդ :

### ՆԵՐՍԷՍԻ ԿԼԱՅԵՑՒՈՅ :

Մեծարեանք յոյն թեաբան և քերթողս , 'ի վերձայն վերձաբանութեն որ ընդ Խաղողեկան հայոց , ( այն է

ոբն ներսէս շնորհալի ,) գրէ 'ի դիմաց նը այսպէս .

* Եւ արդ` յայտնեցից քեզ ինչ մի ես յորոց մինչև ցայժմ թաքուն եղելոց ... ( իբր զի ) էր կաթողիկոս մի Հայոց` որում անուն էր Յովհաննէս , վարուք և բանիւ զուգահաւասար մեծամեծ հարցն մերց . և ամ արտաքին գիտութեց , և նմին իսկ փիլիսոփայութե ոչ ծայրիւ մատանցն հպաւորեալ (1) : Եւ ամայն վարուք` գերազանցեալ գետեմ , եթէ ոչ զամենեքումբք` գեթ զբազմօք : Որ և յաղագս վարուցն և բանից ( վարդապետութ` ) այսմ ամայն աստիճանի և աթոռոյ ասեմ կաթողիկոսացս` արժանացեալ : Այն սա ամայն նախանձու վառեալ` յարձակէր ընդդէմ միաբնակացն , և զամ ժամանակս գոգցես եպիսկոպոսութե իւրոյ ոչ դադարեցաւ գրով և բանիւ հարկանել զնոսա : Ո որոյ զամայն յիշատակն պատուով և բարեպաշտ կարգօք տօնեմք : Որին ամայն և երանելի առնս դոյ առ մեզ գրութիւն` զոր ընդդէմ միաբնակացն գրեաց . լի բազմապատիկ վկայութք գրոց և իմաստիւք , զօրաւոր հաւաքաբանութք ,

և

(1) Այս է ասէջն յոհն . կաթողիկոսի պատմաբանին էր յովհաննու իմաստասիրի ոտնիացւոյ հոմ օձնեցւոյ , * Հմուտ և տեղեակ գոլով բոլոր քերդողական շարագծաց` մասանց բանի և մասնականաց , այլև վարժից սեռից` և որք ընդ գոյացութք են սեռական տեսակարարութք` մինչ ցանհատ վայր . և տարբերութեցն ևս հանգամանաց , և պատահմանց անջատից և անանջատից` ոչ անտեղեակ : Դարձեալ և կրթական վարժից թեռնականաց` որ զարուեստին ծառոյ պտուղս առողանաւյէս ներագրէ յարուեստասէրն ... : Սա ամ առաքինի քաջողջութ զանձն տուեալ աշխատասիրաբար կրթական ջանիւ զինքն զեներ || ևն :

և մեկին իմացուածովք և ապացուցիւք ։
Օ որ և երանայիշատակն Գրիգորիոս կաթո-
ղիկոս՝ սակաւ մի յառաջ քան զիս հասեալ
յայս աթոռ, ձեռամբ հաստատեաց՝ գրեալ
'ի վախճան (գրոց) նորա ։ Այնպէս հաւա-
տամ և ես՝ որպէս նա կաթողիկոսն յովհան-
նէս գրեաց աստանօր, և զորս այսպէս ոչ
հաւատան, նզովեմ ։ Իսկ եթէ կամք են
ձեզ, ընթերցջիք դոյն ինչ 'ի նմանէ, զի
ծանիցես զայրն՝ ո՞պ զաւրւծ յեղնգանց ։ ||
Գրէ այս՝ թէ * Օրինակեցաւ (մատեանս) և
տուաւ մեզ, և մեր առեալ տարաք 'ի թա-
գաւորեալ քաղաքն ։ || Այլ երանի՛ թէ լինէր
մեզ 'ի ձեռս բերել և զյոհաննեան օրինակին գործոյ՝
թէ իցէ թարգմանեալ, զոր որում երևի խոստանալ
Թէորիանէ անդէն յառէջն՝ * Նզովեմ զյարգոյ
սրբութիւդ զի տացէ օրինակել զայդ գիրք
և շնորհեսցես ինձ 'ի պարգևս, զի մա-
թասցուք և 'ի յունական բարբառ ածել
զդա յաշխարհին հռոմոց՝ առ 'ի պատի-
այդր հայրապետի || ՃԾ ։ Ի յառելուածին մաքէ-
նոտարանէ հարց յն. և լր. պղ. ֆարեղոս՝ 'ի
1624. հատ. Ա. եր. 439, և յառաջնումն պղ.
բառել. յամ 1578. եր. 186 և 187 ։

## ԳՐԻԳՈՐԻ ՈՐ ՄԱԿԱՆՈՒԱՄԲ ՏՂԱՅ։

Ի թուղթն Ա. առ արևելեան վարդապետս, յետ
առաջին դնելոյ զբէջ լուսաւորչին և զհետևողաց նո-
րին 'ի ժողովն քաղկեդոնի՝ զհամաձայնութիւն ընդ
այլ եկեղեցեաց՝ յաւնաց առեմ և հաստատեցուց զոր
յեղափակէ, յաւելու * Խնդրելի է՝ եթէ յետ
այսորիկ ո՞վ ոք 'ի հարցն մեր յայսոսիկ դը-
դուեցաւ ։ եթէ զՅովհաննէս ասեմք զի-

մաստասէրն՝ որ և աթոռակալ սոյն աթո-
ռոյս , և նա այսորիկ հետևեցաւ շաւղաց և
ուղղափառութե՛ . և մերն այլ ո՛չ նախնիք
զնորայն ընկալան խոստովանութի՛ , և ձեռ-
նադրեցին անխախտելի մնալ զնոս , ( այս
բնաւ՝ ստորագրեցին այսմ գրոյ յոհաննու իմաստասէ-
րի , զի անխախտելի հաւոյէ . և ստորագրողն էին )
Գրիգոր վկայասէր , և Բարսեղ հետևող
նորին , և միւս Գրիգորիս և Ներսէս մերս
հարք . և է յարկեղս գրոց մերոց ընկալեալ
'ի նոցանէ :||

Նա բնաւ 'ի Թուղթն Է . առ Գրիգոր տուտէորդին՝
գրէ նշանակելով՝ յաւելն * Առ որ յանդիմանէ
զքեզ երջանիկ և ո՛չ հայրապետն յոհան-
նէս իմաստասէր և ուղղափառ ասէ . փախ-
չիս 'ի բնութեդ անուանէ , ընդ նմին և յեր-
կուցդ ասելոյ :|| Բերէ հատուած ընդարձակ , մին-
չև ցայն տեղի՝ * Երկուց գոյացութեցն կա-
տարելոց միաւորութի՛ , և այլն :||

Սա բնաւ Գրիգոր կաթողիկոս յեղափոխէ յանուանէ
զնոյն Յովհաննէս հայրապետ՝ և 'ի Թուղթն ծա-
ղկական առ Մանուէլ կայսր՝ ըստ ընտիր օրինակաց .
զի որք յօրինակս ինչ գրէ առանց անուան՝ այսպէս .
* 'Ի հոգևշունչ բանէ հօրդ մերոյ կաթո-
ղիկոսի .|| և յայլ նոր օրինակ մի՝ * 'Ի հոգե-
շունչ բանէ հօր մերոյ Ներսիսի յոհաննու
կաթուղիկոսի .|| յայլ հնագոյն և 'ի վաւերական
օրինակ զոր ունիմք առ մեզ՝ գտանեմք զյոհաննու
անուանն ևեթ . ըստ այսմ օրինակի է և տպագրեալն 'ի
Ամստերտամ՝ այսպէս . * Իսկ զևս հաւա-
տարմութեան դաւանութե՛ մերոյ՝ ընդարձակ
բանիւ՛ ունի տեղեկանալ թագաւորութիդ
ձեր 'ի հոգևշունչ բանէ հօրն մերոյ Յոհան-
նու կաթուղիկոսի , զոր կարևոր համարե-

ցաք

ցուք առաքել առաջի ձեր՝ առ ՚ի դիւրել հաս-
տատուել , թէ ոչ նորոգ եմուտ ՚ի մեզ ուղ-
ղափառ դաւանութիւն , այլ ՚ի հարցն առաջ-
նոց իջանէ ։ || Որ յայտ է թէ հայք յառաջնեայս
ճառս յովհաննու իմաստասիրի , որոց զօրինակն եւ
շնորհալին ՚ի ձեռս թէորեանեայ . եւ զայս կամի ասել
Գրիգոր կաթողիկոս , թէ արդէն առաքեցաք առ ձեզ
զճառն յովհաննու կաթողիկոսին մերոյ յառաջնոյ
ընթայեն մերոյ ներսէսի . կամ թէ զայլ օրինակ եւ
միաբանակամ յղեալ է նա ընդ Գրիգոր կաթողիկոս ։
Իսկ ո՛չ ներէին հերձին բանք նորա ( որ եդաք ՚ի վե-
րոյ՝ ) ընթեռնուլ փոխանակ անուանն յովհաննու զա-
նուն ներսէսի , զի ո՛չ ՚ի գրուածոց ներսէսի կարէին
իմանալ թէ ուղղափառ դաւանութիւն հայոց՝ ՚ի հարցն
առաջնոց իջանէ , որպէս իմանային ՚ի գրոցն յովհան-
նու՝ որ հնագոյն էր յոյժ ժամանակաւ քան զներսէս ,
եւ համարեալ ՚ի թիւս նախնի հարց հայաստանեայց
եկեղեցւոյ ։ Այլ ո՛չ ուշ եդեալ տպագրողաց՝ մա-
ծուցեալ են ՚ի վերայ անուանն յովհաննու զանուն
ներսէսի ։

## ՆԵՐՍԷՍԻ ԼԱՄԲՐՈՆԱՑՒՈՅ։

Յետ խօսելոյ երկար զերկուց բնութեանց քսի , եւ մեկ-
նելոյ զիմաստ բանին՝ * Մի է բնութիւն բանին
մարմնացելոյ , || առարկէ ընդդէմ իւր ՚ի դիմաց
ոմանց յաւելն՝ * Ոչ ըմբռնէր ասեն , ոչ ոք զայս
մինչեւ ցայսօր յայտնեաց , այլ մանաւանդ
եւ զնորին հակառակն , || պատասխանէ * Ո՛չ
է այս քննելի . մանաւանդ թէ եւ բազումք
ասացին ՚ի մերոցս՝ առաջնոց սրբոցն եղեալ
հետեւողք ։ Սակայն բարք մարդկան հակա-
ռակասէր է . զայնս որ ճշմարտութեան էր ջա-
տագով եւ խաղաղութեան՝ անգոսնեցին . եւ
զառ

զառ. թշնամութի՛ն մարդկան բանսն՝ սիրեցին
և գրեցին։ Ապա թէ ոչ՝ ո՞ւր գիտէք զբանս
Յոհաննու իմաստասիրին և հայրապետին,
որ զայս առ մեզ՝ վկայութ. հարցն սէգ սատու-
գէ։ Ո եղբի հայրապետին, և զիւրոյ ժո-
ղովրդին զհաւանութին։ Ո վահանայ հայ-
րապետին զհամաձայնութին առ մեծ եկե-
ղեցին հռոմայ, և զնորին հետևողաց թա-
գաւորացն և վարդապետաց. յորոց մի էր և
ինքն ամենաշնորհ՝ և յոգունց գերազանցն՝ հր-
րեշտակն՝ ի մարմնի գրիգոր նարեկացի։ Ո՞ւր
և զորոյ աչօք տեսէք, և բանիւն աշակերտ-
էք, և հիմանն արկելոյ շինիչք, զմեծ հօրն
մերոյ ներսէսի՝ զայսմ հետևողութի։

Յառաջաբանութիւն թղ. եր. 35։

# ՆՈՐԻՆ (1) ՅՈՎՀԱՆՆՈՒ ԻՄԱՍՏԱՍԻՐԻ ԵՒ ԿԱԹՈՂԻ ԿՈՍԻ ՀԱՅՈՑ ՕՁՆԵՑՒՈՅ

## ԸՆԴԴԷՄ (2) ԵՐԵՒՈՒԹԱԿԱՆԱՑ։

ՅՈՅԺ ՏԵՆՉԱԼԻ ԷՐ ինձ և փափաքելի՝ ոչ այլոց զխօս և ոչ զայլս ինձ լինել 'ի թշնամութեան, այլ յամ ժամ զբարեաց զհետ երթալ

(1) Գրչագիր օրինակ ճառիս է տետրակ փոքրագիր հաւնեալ 'ի կարգէ կամ 'ի վերջ կուսէ մատենի զանազան գործոց հեղինակիս, որ Յովհաննու փիլիսոփայի կամ իմաստասիրի օձնեցւոյ, նոյն իրի և 'ի վերնագրի ճառիս խորհրդով եդեալ էր՝ Նորին Յովհաննու իմաստասէրի, են։ Եւ մեզ անկ էր ըստ օրինի հաւատարմութե այնպէս տպագրել՝ որպէս և գտաք 'ի ձեռագիր օրինակի։ Իսկ նախընթաց գործք նորա յայտ է թէ են այնք՝ զորս կանխաւ ունէաք 'ի ձեռին, յորոց և ինչ ինչ յառաջ բերեալ է 'ի կարգի պատմութե հայոց. որ են՝ Առանաբանութե ժողովական, Բացայայտութե եկեղեցական կարգաց, և կանոնք կարևորք որ ժամանակին պէտոյից, որպէս և Ճառն ընդդէմ պաւղիկեանց կամ պօղիկեանց, զորս զկնի երևի գրեալ և այս ճառս որ ընդդէմ երևութականաց։

(2) Յայտ է 'ի խորագրէս և 'ի բովանդակ ընթացից ճառիս, զի իմաստասէրն խօսի ընդդէմ երևութականաց կամ առ աչօք աստղաց զանօրէնութե բանին մարմնացելոյ. և այն ևս յայտ է՝ թէ առ ժամանակօք իմաստասիրին յեօթներորդ և յութերորդ դարու յայն մոլորութե անկեալ էին ոմանք յաշակերտաց մայրագոմեցւոյն յովհաննու. որոց ընդդէմ զկնի և ածաշնորհ վար-

Թուղ [1] ՚ի առաքելական հրամանին , առ մի-
մեանս և առ ամենեսին , ՚ի բոլոր սրտէ [2]
առ հասարակ մարդկան զխաղաղութիւն ունել
խնդրելով . որպէս զի նովին և զանձն իւրոյ և
զխաղաղութիւն ՚ի մեզ հաւանեցուցանել հնա-
րեսցուք բնակել տալ : Բայց վասն զի զոր ՚ի
սկզբանն ՚ի բանս հրամայեցուք գնել զալա-
նութեան գործիս , վերստին այժմ աւասիկ
՚ի ձեռն առնլով մարդկան՝ պատերազմին առ-
մեծանս , և ը . մեր գլխոյն քոյն անդամոց
բա-

Ժամկէտ իմաստասիրին Թէոդորոս վարդապետ յաւան-
ձին Ճառի ՚ի բերում, մակագրեալ Ընդդէմ Մայրագոմեցւոյն .
զորմէ տես ՚ի պատմ . հայ . հատ . ը . եր . 362—367 :
Այլ գործ է գտանել , թէ մ է այն որ խանգարէ
տանս հայոց . և զինչ անուն նր . զոր ՚ի մանաւորի
կշտամբէ աստանօր հեղինակս : Ձեր տարակոյս՝ թէ մի
է ՚ի հետևողաց մայրագոմեցւոյն և աշակերտի նորա
սարգսի , գուցէ թէ իցէ նոյն ինքն սարգիսն , զոր յայտ-
նապէս ՚ի սխալս մոլորութիւն անկեալ գոլ վկայեն
պատմիչք մեր , և առաւելապէս յովհաննէս կաթողի-
կոսն : Այլ եթէ սարգիսն մեռեալ իցէ փոքր մի յա-
ռաջ քան զաւուրս իմաստասիրին , առելի է թէ այլ
ոմն նման նմին սարգսի ը ամ ՚ի հաստատութեանց երևեալ
է յայնժամ ՚ի մէջ ազգիս , և ընդդէմ այնպիսւոյն են
ամ կշտամբութիւնք Ճառիս ուղղակի , և հետևաբար կմ
անուղղակի՝ ընդդէմ այլոց խաւարար անձանց , որք
փախչելով ՚ի ձայնէս Երկու բնութեն , ոչ ուղիղ իմա-
նային և զՄի բնութեն առելն . նմին իրի և ՚ի զանազան
մոլորութիւն մատնէին : Որ գիտել արժան է և զայն ,
զի կղեմէս գալանոս ըստ ձախողակի կարծեաց տարա-
ծեալ ՚ի մէջ ռամկաց՝ այնպէս աորագրէ զյովհան հայ-
րապետ օձնեցի , որպէս թէ իցէ գլուխ դասուց մայրա-
գոմեցւոց . և զբանս յովհաննու մայրագոմեցւոյն և
սարգսի աշակերտի նր մակաբերութբ ընծայէ օձնեց-
ւոյն , ուր եթէ ընթերցեալ էր գալանոսի զճշմարիտ
գրուածս օձնեցւոյն , յետս կոչէր զիւր գրեալսն , և
պարզապէս դաւանէր զօձնեցի իմաստասէր հայրա-
պետն ջաղջիչ գլխոյ անգլուխ մայրագոմեցւոց ուղ-
ղափառ վարդապետութբ :

(1) ա . Թես . Ե . 15 : (2) Հռովմայեց . ԺԲ . 18 :

բաղում գլուխք և ցեղապետք նստեալ կա-
ցին ։ Ապա հարկ է մեզ՝ որ զմին միայն ընտ-
րեցաք ունել զօրագլուխ և վերակացու
կենաց մերոց ․ որք ոչ միայն (1) ով զմեզ ա-
սեմք , այլ և վս նորա գիր հանեմք , և յա-
նուն նր խրախոյս բառնամք , յաղագս նո-
րին աշխատիկ և (2) առեամք զառելիսն նր ․
զկատարելագոյնն զնոսին առեացուք զա-
ռելութի ։ Այլ և ասացից առ նա ․ (3) մի
կեցջիք , փոխանակ զի սուտ խօսեցայք յա-
նուն տն՝ ըս մարգարէին ձայնի ։ Իսկ զի՞նչ
ատել չարագոյն կայցէ (4) քան զոչ խոստո-
վանել զքս մարմնով եկեալ ․ զոր մարգարէ-
ցուցին և նեռն անուանէ մեծն յովհաննէս ։
Քանզի (5) այնքան որբեն և նուաղեցուցա-
նեն նոքա՝ զորոց բանս է , որ վս քնի մար-
մնոյն

(1) Եսայ․ խէ․ 5 ։ (2) Սաղմ․ ճլթ․ 21․22 ։ (3) Երեմ․ իէ․ 16 ։ (4) ա․ Յովհ․ դ․ 3 ։ բ․ Յովհ․ 7 ։
(5) Յար և նման են բանքս ասացելոցն 'ի մեծէն լեւոնէ ընդդէմ եւտիքի 'ի տումարին՝ յերես 26․ ✱ Եւ ոչ 'ի վերայ
« ուղղափառ երանելի առաքելոյն և աւետարանչին յով-
« հաննու զաձի հարաւ, որ ասէ․ Ամենայն հոգի որ
« խոստովանի զյս քս մարմնով եկեալ՝ յայ է, և ամ
« հոգի՝ որ լուծանէ զյս, ոչ է յայ․ և սա է նեռն ։
« Եւ զինչ իցէ լուծանել զյս, եթէ ոչ՝ զմարդկայինն
« 'ի նմանէ զատանել զբնութի․ և զխորհուրդն՝ որով
« միայն փրկեցաք, ունայնացուցանել լրբենի և մոլո-
« ցածին խորհրդովք ։ Իսկ որ 'ի մասյն մասնի 'ի վր
« բնութե մարմնոյն քնի, հարկ է՝ զի և վս չարչարա-
« նաց նր նովին լլացութբ անմտանայցէ ։ Զի թէ չհա-
« մարի սուտ զխաչն տն, և ոչ երկուանայ ընդ ճշմա-
« րիտն լինել տանջանաց յանձն առելոց վս աշխարհի
« փրկութե, (ապա) ոյր հաւատայ զմահն, ծանիցէ և
« զմարմինն․ և մի ժխտեսցէ մարդ լինել մերովս մար-
« մնով, զոր ճանաչէ չարչարելի գոլ ։ վս զի ուրանալն
« զճշմարիտ մարմինն՝ է ուրանալ և զմարմնաւոր չար-
« չարանս ։ || Բաղդատեա և ընդ ասացելոցն 'ի Թեո-
դորոսէ ընդդէմ մայրապաւմացւոյն․ ✱ Քանզի աշա

մնոյն մտածութիւնք և ձայնք, մինչ զի առ ա՛չս
երևութեան կարծիս արկանել մարմնացե-
լոյ բանին, որքան 'ի զօրութենէ բանից (1) նո-
ցա 'ի միտ առնուլ է. քանզի զամենայնսն 'ի
ք՟ս ըստ մարմնոյն կիրս՝ ոչ առնուն յանձն
առնել ը՟ն մարմնոյ և կամ մարմնով, զի մի՛ եր-
կուց ասեն ակնարկութի տայցեմք բնութեց
'ի մին ջ՟ս. այլ ինքն իսկ բանն ա՟ծ էր՝ որ ը՟ն
երկոսին անցանէր ասեն, ը՟ն մարդկայինսն
և ա՟ծայինսն: Զարմանամ ընդ այնպիսի
կեղակարծ և գ՛այթիգայթ խոստովանութի.
եթէ անմարմնապէս զմարմնականսն կարե-
լի էր կրել ք՟սի, ընդէ՞ր և մարմին զգեցաւ
'ի կուսէն՝ ինննամսեայ ժամանակաց յղա-
ցու՟թ, և ծննդեամբ յառաջ եկեալ՝ երևե-
ցաւ տղայ. (2) գտանիցէք ասէ մանուկ պա-
տեալ 'ի խանձարուրս, և եդեալ 'ի մսուր:
Նա՝ (3) եղելոյ 'ի զաւակէ դաւթի ըստ մար-
մնոյն: Նա՝ (4) յորոց և ք՟ս ըստ մարմնոյն:
Նա՝ (5) մե՛ծ է խորհուրդ ա՟ծպաշտութեն,
որ երևեցաւ մարմնով: Նա՝ ք՟սի չարչա-
րին

« վերայայտեցան այժմ 'ի տանս թորգոմայ նորածին
« դառնութեէ զարմք, օցտոլք ճշմարտութեանն....
« որք անսարսափելի մօզք և անձնահանձար իմաստուք
« աչա յաւակնելք յարաձգին առ բոլորեցն արարող
« և համագոյիցս փրկող բանն ա՟ծ. և 'ի թագէ տնօրէ-
« նական կրիցն զմինն 'ի բաց կապտեն զակն հաւա-
« տոյն, ո՛վ զի զբոլորն ուրացեին զփրկանակն զկիրա-
« ռութեան, կիսափրկումն մարդոյն առադրելով մաս-
« նաւորու՟թ դաւանել զփրկանակն բանի զտնօրինա-
« կրու՟թն:||

(1) Բանից Նոյա. Այսպէս ուղղագրեցաք ը՟ն պահան-
ջելոյ իմաստից բանին, ուր յօրինակին վրիպակաւ գրչի
գրեալ էր՝ Բանից նոյա:

(2) Ղուկ. բ. 12: (3) Հռովմ. ա. 3: (4) Անդ. թ. 5:
(5) ա. Տիմ. գ. 16:

ըրէն (1) մարմնով առէ ։ Եւ՝ (2) Թէպէտ և մե-
ռալ մարմնով, այլ կենդանի է հոգւով ։
Այլ ակամայ կուրութին ցանկայ, ոչ տե-
սեցելոցն տեսող (3) ։

Այլ և ոչ 'ի կուսէն ասեն մարմնանալ, այլ
'ի կուսին (4). զի մի արդեւք 'ի կուսէն ասե-
լով՝ զմերս յիշեցուցեալ 'ի ներքս ածցեն
բնութի ։ Իսկ 'ի կուսին ասացեալ՝ [illegible]ն ա-
պա ասեն բանն Աստուած մարմնացեալ լինի յար-
գանդի կուսին ։ Ըստ բնութեա՞ն զմարմնա-
նալն տայք բանին, հարցանեմ զձեզ, եթէ
ըստ առ ինքն զառ 'ի մենջ միաւորելոյ ։ Ե-
թէ յիւրն ընկալաւ զայս գոյացութի, ըն-
ծա

(1) Ա. Պետ. Գ. 1 ։ (2) Անդ. Գ. 18 ։
(3) Մարթ է կրկնակի պարզել զբանդ, նախ՝ այսպէս. Այլ կուրութեն ցանկայ թէ և չկամեցի, որ համարի զանձն (ըստ յանդուգն հերեսիովտաց՝) 'ի հաւատոյս տեսող՝ անտեսանելի կամ անգոյ և մտացածին իրաց, զորս ոչ ցուցանեն մեզ յիշատակեալ բանքս Սբ գրոց ։ Որպէս թէ ոք կորովարիբ կամելով լինել 'ի տեսու-թն արևու՝ կուրացի ակամայ 'ի ճառագայթից նորա ։ Երկրորդ՝ այսպէս մարթէ պարզել. Այլ՝ (զի՞նչ օգուտ իցեն վկայութիւնքս Սբ գրոց 'ի լուսաւորութիւն հերե-տիկոսացս, որք կամաւոր կուրացեալ են.) զի ակամայ կուրութն է որ ցանկայ տեսանել զորս ոչն է տեսեալ ։ Այլ յայնժամ այլազգ պարտ է կէտադրել, և յա-ւելուածով ընթեռնուլ այսպէս. Այլ ակամայ կու-րութն ցանկայ ոչ տեսեցելոցն տեսող լինել ։
(4) Մերձաւոր յոյժ առաջիկայ և յետադայ բանից ի-մաստասիրին բարբառն և երանելին փուլգենտիոսի ափ-րիկեցի 'ի սկիզբն Է. գլուխ, 'ի գիրսն յաղ. մարդեղ. և շնորհ. առ պետրոս սարկաւագ սկիտացի. գլ. Գ. որում վերնագիր եդեալ՝ թէ * Բանն ոչ միայն մարմնա-
• ցաւ 'ի կուսին՝ այլ նաև 'ի կուսէն ||, գրէ * Զի եթէ այն-
• պէս մարմնանայր բանն Աստուած 'ի կուսին, մինչև ոչ լի-
• նել 'ի նմանէ, առանց կարծեաց ոչ 'ի մարմնոյ ան-
• տի մօրն ունէր նա ինքն Աստուած զգոյացութիւն մարմնոյն,
• և անզք իմն լինէր նր ընդ կոյսն. և այսպէս ոչ խոր-
• հուրդ միջնորդին օգուտ ինչ լինէր մեզ առ 'ի փրկ-

ծանեաւ եղև յայնմանէ՝ յորում էրն, 'ի
նմանէր է և յայս փրկութե մերոյ։ Բայց կար-
ծեմ՝ զայլ ինչ երկնել մտաց ձերոյ այսպէս
կեղծաւորելովդ։ Ո՜ ինչ արտասցես և ըզ-
Հրեշտակապետին ձայն՝ (1) որ 'ի քէն ծնա-
նելոցդ է սա, և ոչ թէ որ 'ի քեզ։ Եւ է-
թէ՝ (2) առաքեաց ած զորդին իւր, որ եղև 'ի
կնոջէ. — Եւ թէ՝ (3) առաքեաց ած յոյ, և
առ Հոգի և մարմին 'ի կուսէ։ Եւ եթէ՝ (4)
քն 'ի կուսէ, կանայք կոյսք լերուք։ Եւ է-
թէ՝ ծնաւ 'ի մարիամայ սբյ կուսէ։ Գի-
տեմ զի զայսոսիկ լսես, և ոչ հնազանդիս-
զի

» կութի, և ոչ քն որդին այ անշփոթաբար միաւորել
» յինքեան զաներկբայ ճշմարտութե մարդկային և ած-
» ային գոյացութեն։ Արդ՝ ատլին գեղով բժշկապես
» վարեցաւ ածային բարութին, այլ զի նոյն ինքն միա-
» ծնին ած որ է 'ի ծոց հօր՝ մարդացաւ ոչ միայն 'ի կը-
» նոջ, այլ և 'ի կնոջէ. զայն և յածայնոցն պատգա-
» մաց հրամայիւք հաւատալ աներկբայաբար և խոս-
» տովանել։|| Բերէ ապա 'ի մէջ զնոյն վկայութիւն 'ի
սբ գրոց՝ զոր և իմաստասէրս 'ի կիր առնու։

(1) Ղուկ. ա. 35։ (2) Գաղատ. դ. 4։
(3) Այս է բան սբյ լուսաւորչին 'ի վարդապետութեն
որ 'ի գիրս ագաթանգեղոսի 'ի տպ. յերես 156. յորմէ
և առնու իմաստասէրս, որպս և այլ ինչ ինչ՝ զորոց 'ի
ստորև։ Բայց յայժմու օրինակս որ առ մեօք՝ կայ դոյզն
տարբերութի, քանզի որ 'ի տպ. գրի յաւելուածով
* Առաքեաց ած յոյ սբ հոգին, և մաքրագործեաց
» զկոյսն, եառ մարմին 'ի կուսէն որդին ած մարդ կա-
» տարեաւ։|| 'ի հին օրինակն ագաթ. որ կայ 'ի մեծ
գրատան փարիզու, գրի * Առաքեաց ած յոյ սբ որ-
» դին, եառ զմարմին 'ի կուսէ մարդ կատարեալ։||
ոպ և 'ի ճառընտիրն՝ * Առաքեաց ած յոյ բանն, առ
» մարմին 'ի սբյ կուսէն մարդ կատարեալ։|| ուր ոպ
տեսանես՝ և ոչ 'ի միումն կայ բառն հոգի, զոր ընթեռ-
նու իմաստասէրն յիւրումն ընտրելագոյն օրինակի։
(4) Է բան գրիգորի ածաբանի 'ի ճառն ածայայտնութե
և ծննդեան՝ որ է ը կարգի յայն. և լատ. տպ. ճառ. լը.
որոյ սկիզբն է * Քս ծնել լինի։|| Իսկ յետագայ բանն՝
առեալ է 'ի հանգանակէն։

զի եղիցիս 'ի կորուստ անհնազանդեալ որդիդ հարանց ։

Ապա թէ յերկիւղէ տարակուսանաց է, թերահաւատեալդ ձեր, զնմանսն առնէք այնոցիկ, որք 'ի սրոյն զարհուրանաց փախչելով՝ դահավէժք եղեալ մեռանին ․ ըստ նմին և դուք երկուցեալք յերկուցն ասել բնութեան՝ (1) 'ի պանդորոսին փախուցեալ անկանիք յանմարութի, որ զբանն 'ի մարմին և յոսկերս յեղեալ ասէր ։ Օ ի եթէ ոչ խորհրդդ ակամբ հայ ․

(1) Այս մատենագիրս այլոց ազգաց ոչ գիք գտանք յարդ Պանդորոս կամ Բանդորոս անուամբ հերետիկոս ․ և որ յիշատակի առ սիւնկեղոսի յոյն ժամանակագրի Πανόδωρος Բանոդորոս միայնակեաց՝ (ըստ մեզ սառագրեալ Պանոդորոս կամ Պանդորոս՝) է մատենագիր աստեղաբաշխ և ժամանակագիր 'ի վախճան Դ․ դարու, զորմէ մի Հերձուածոյ չյիշեն ինչ մատենագիրք ։ Իսկ 'ի հայոց՝ նախ իմաստասէրն Եղնիկ յիշէ զՊանդորոսն, յորմէ առեալ երկրորդեն և վերլուծք հայոց առ Խաչիկ կաթողիկոսիւ, և գրիգոր տղայ, և այլք ․ որ եթէ չյիշէ յատուկ անուն մանաւանդ հերետիկոսի, մինչ ասել՝ թէ է այլաբանական անուն ընծայեալ ումեք յանանուն կամ 'ի վատանուն հերեսիովտաց, զի Պանդորոս կամ Բանդորոս բառ յն ․ Թարգմանի ամենապարգեւ, բայց 'ի բախտանցի ևս ոչ գտաւ այլ ինչ՝ բաց 'ի մնացախաբ յուսոյ, ըստ որում յիշատակել է մեր 'ի Ծանօթութիս Թեսաւրոսի ։ Իւ թէպէտ մոլորեցուցչին անուն անծանօթ է մեզ՝ բայց ոչ և մոլորութիւն, զի յիշատակեն զայն և ոմանք 'ի նախնեաց՝ որպէս սբն Աթանաս 'ի թուղթն առ եպիկտետոս կամ եպիկտոսին ըստ հայ ․ օրինակին ըստ որոյ տպագրեալ է 'ի վախճան գրոյն պարապմ․ կիւրղի ապէքս՝ յեր'' 492 և 496. ուր կշտամբելով զհերետիկոսս ժամանակին, ասէ՝ * Իսկ ուստի եւ, որ դժոխք
« զեղայսեցին միաբանական ասել զառ 'ի մարիամայն
« մարմինն բանի ածութեան ։ Կամ թէ բանն 'ի մարմին
« և յոսկերս և 'ի մազ շրջեցաւ, և այլայլեցաւ յիւրմէ
« բնութենէ ||, և սոյն ինչ զինի ․ * Իւ յայլ ամպարշ-
« տութին յեղափոխեալ անկայք՝ ասելով ․ 'ի մարմին և
« յոսկերս և 'ի ջիլս և 'ի բոլոր իսկ մարմնոյ բնութի
« փոփոխեալ բանին՝ և այլայլիլ յիւրմէ բնութենէ ․ ||

հայել գիտասջիք յաւետարանական ձայնն, [1] բանն մարմին եղեւ, ոչ եւեթ հեռանալ կարիցէք յառաջ ասացեալ հայհոյութենէն: Ըստ նմին օրինակի՝ զմին ասել բնութիւն, եթէ ոչ պարտն ասել ըն̄ ճշմարտութե̄ն կարգի ոչ ասիցէք, բազում չափ հոմատեսակէք եղանիցիք՝ զհայհոյութիւնն բարբառողաց: Քանզի առ այս՝ ծմ̄ քննասիրաց լուսաւորեալ են մտաց աչ.ք, զի ոչ է մի բնութի մարմնոյն և բանին ըստ նոյնութե̄ բնութե̄. զի ոչ մարդկային երկուքին, և ոչ ածային: ոչ մարմինն յերկնից իջեալ՝ ըն̄ [2] առաջին եւտիքեայ բաջաղանացն, և ոչ ածն բան 'ի մա

րե-

ւր և ճոխագոյնս հերքէ զմոլորութիւն 'ի յետագայ բանսն: Յայտ է թէ 'ի նոյն հայր և ըն̄ բառից գրեալն 'ի վերջերեալ հայոց առ խաչիկ կաթողիկոսին * կամ
• յեղումն ասել ածութեն 'ի մարմին իբրև զղանգու-
• ղացնն: || Եւ ոչ հաւանական թուի ասել, այս մոլորութի առ ժամանակօք սրբյն աթանասի նորոգ ընձիւղեալ էր. զի և անանուն հայ հեղինակն հաւաքածոյ պատմութե̄ կայսերաց սկսեալ 'ի կոստանդիանոսէ մինչև ցյուստինիանոս երրորդ (ըն̄ այլոց երկրորդ.) որ յեօթներորդ դարու, նշանակէ որոշակի զժամանակ երևելոյ Պանդուրացւոց, ոյք են՝ առ վաղենտինիանոսիւ և վաղեսիւ, առ ժամանակօք բարսղի և գրիգորի ածաբանին, 'ի վերջին աւուրս սրբյն աթանասի, յասելն 'ի ճառընտիրն. * Եւ էին հերձուածողք ժա-
• մանակին ... ապողինարացիք ... և պանդուրացիք՝
• որ զբանն 'ի մարմին յեղեալ ասեն ... և սոփորնացիք՝
• որ առանց մարդկային հոգւոյ ասէին զմարմնաւորութիւն
• քի: || Այլ են ոմանք որք մարկիոնեանց ընծայեն զայս մոլորութիւն, ոչ և հեղինակն որոմախօսութե՝ ընդդէմ մարկիոնեայց, որ յածի յանուն որոգինի:

(1) Յովհ. ա. 14:

(2) Զգանազանութի կրկին պանդաւորաց եւտիքեանոսեանելոյ՝ առաջնոյ ասեմ և երկրորդի՝ ոչ ուրեք գտանեմք առ մատենագիրս այլոց ազգաց, բայց զառաջինն յայս ճառ իմաստասիրին, յորմէ առեալ երկրորդեն և այլք զկնի նր: Եւ թէ արդարև հղուցեն և

ընմայ առեալ սկիզըն , որպէս փառաւորապ
թուեցաւ ասել . այլ ենն անեղ՝ յանեղա
գունէն իջեալ հօրէ՝ մարմին ստացական
յարգանդէ կուսին զգեցաւ :

Նա ստ ուրեմն ոչ է ըստ բնութե նոյնութե մի բնութի (1) . զի եթէ և ասեմք՝ մի բնութի բանին մարմնացելոյ , ոչ այդպէս խելամտեալ և զաղջախ մտածութբ , ոչ թէ միայն (2) 'ի կուսէն 'ի բաց բարձեալ . և կիմ լուծեալք 'ի մի

այլ որք հերետիկոս համանուն աղանդապետին , մնայ ասել՝ թէ այսմ կարծեաց մտաւ դատնելոյ առ սմանս (յորոց թերևս առնու և իմաստասէրն՝) լեալ իցէ պատճառ նորին իսկ խառնախօս աղանդապետին եւտիքեայ անհաստատութին 'ի բանս , զի երբեմն ասէր յերկնից բերել զմարմինն տն , և իբրև ը խողովակ անցուցեալ ընդ կոյսն ըստ վաղենտինեանց և այլոց հին աղանդաւորաց . երբեմն՝ երկու բնութիւս ասէր յառաջ քան զմիաւորութին բանին և մարմնոյն , և երբեմն մի բնութի ասէր քնի , յայտ է թէ շփոթեալ և խառնակեալ , և յայլ և այլ մոլորութիւս զառածանէր , զորս և յիշատակեն բազումք 'ի ժամանակակցաց և 'ի յետնոց :

(1) Այս անհրաժեշտ եզրակացութի իմաստասիրին մերոյ՝ արմատաքի խլէ զամ տարապարտ վէճս այնոցիկ , որք պնդեալ կացին մնացին 'ի վերայ համաձայնութեան մի բնութեն . զի թէ ոչ է ըստ նոյնութե բնութե մի բնութի , այլ ըստ նոյնութե անձնաւորութե , ապա ոչ լինի փախչել 'ի ձայնէս երկու բնութեն . և ոչ լինի այլազգ ասել մի բնութի բայց վս միութե անձին . ոպ և 'ի բովանդակ ճառէս ուսանիս :

(2) Համդոյն առաջիկայ բանից իմաստասիրին գրեն և վարդապետք հայոց առ խաչիկ կաթողիկոսին՝ յասելն , * Ոչ միաւորութբ յեղումն կամ շփոթումն կմ 'ի բաց • բարձումն ասել միոյն զմիւսն : || Ոպ և այլ ոմն անանուն վարդապետ գրելով ընդդէմ նեստորի և եւտիքի՝ 'ի ճառընտ , ասէ . * Արարչական բանին բնութե անդր • ևս է քան զհրաշս , զծառային առնուլ պատկեր՝ ոչ • յեղլով կամ սպառելով 'ի բաց բարձելով միւսոյն • զմիւսն , այլ՝ անմեկնելի հաղորդութբ : || որով դիւրաւ ուղղագրես և զվրիպակ գրչին մերոյ * Ոպ թէ • միայն 'ի կուսէն 'ի բաց բարձեալ . || փոխանակ գրելոյ՝ * միայն 'ի միւսմէն : ||

միմեանց՝ ոչ խառնակուած բնութեանցն, յորմէ լինի և ոչ մի բնութիւն։ Այլ զոր էրն՝ ոչ 'ի բաց թողլով, եղև՝ զոր ոչն էր. և այսպէս բարձրագունին ծանուցաւ խոնարհութիւն. (1) Մնալով 'ի բարձրութեան գտաւ նոյն ինքն 'ի

(1) Բայց գիտեա զմիաբանութիւն այս տեառն բանից ընդ-ասացելոցն 'ի տումարն լեռնի՝ յերես 12. * Արդ՝ պահմամբ յատկութեան երկաքանչիւր բնութեան, և 'ի մի ժողովելով անձն, առեալ եղև 'ի մեծվայելչութենէ խոնարհութիւն, 'ի զօրութենէ տկարութիւն, 'ի յաւիտենականութենէ մահկանացութիւն. և առ 'ի լուծումն պարտեաց մերումս վիճակի՝ բնութիւն անեղծական միացաւ ընդ չարչարելի բնութեան. ուստի զի՝ որ այն ինչ էր յանկաւոր մերոց դարմանոց, մի և նոյն միջնորդն Աստուծոյ և մարդկան՝ մարդն Յիսուս Քրիստոս, և կարասցէ մեռանիլ ըստ միոյ (բանի), և չկարասցէ մեռանիլ ըստ միւսոյ (բանին)։ Եւ արդ՝ անթերի և կատարեալ բնութեամբ ճշմարիտ մարդոյ ճշմարիտն ծնաւ Աստուած, բովանդակ իւրովքն բովանդակ մերովքս։ Իսկ մերս ասեմ՝ զոր միանգամ 'ի մեզ 'ի սկզբանէ հաստեաց արարիչն, զորս և 'ի պէտս նորոգելոյ՝ յանձն իւր ընկալաւ։ Վասն զի այն ինչ իւրք՝ զորս պատրողն 'ի ներքս եած, և մարդն պատրեալ յինքն ձգեաց, և ոչ մի հետս ունէին 'ի փրկիչն։ Եւ ոչ վասն հաղորդ լինելոյն մարդկային տկարութեանց՝ մասնակից գտաւ մերոց յանցանաց։ Էառ զկերպարանս ծառայի առանց արատոյ մեղաց, զմարդկայինս պերճացուցեալ, զաստուածայինս ոչ ինչ նուազեցուցեալ։ Վասն զի ունայնացուցումն այն՝ որով աներևութելին երևանելի զինքն ընծայեցոյց, և արարիչն և տէրն բոլորից գոյից մի 'ի մահկանացուաց լինել կամեցաւ, վայրիջումն էր ողորմութեան և ոչ պակասումն կարողութեան։ Սմին իրի՝ որ մնալով 'ի կերպարանս Աստուծոյ՝ արար զմարդն, նոյնն 'ի կերպարանս ծառայի եղև մարդ։ Վասն զի կայ ունի առանց թերութեան զիւր յատկութիւն երկաքանչիւր բնութիւն. և զոր օրինակ զկերպարանն ծառայի չբառնայ 'ի բաց կերպարանն Աստուծոյ, նոյնպէս զկերպարանն Աստուծոյ ոչ նուազեցուցանէ կերպարանն ծառայի։ || Մօտաւոր են Ը եղերաց և այն բանք տումարին՝ յերես 16. * Վասն զի որ էնն Աստուած ճշմարիտ՝ նոյնն է մարդ ճշմարիտ, և չիք ինչ ստութիւն յայսմ միութեան, մինչ միանգամայն են և խոնարհութիւն մարդոյ, և բարձ-

'ի խոնարհութե․ որպ սուրբն գրիգոր ասէ (1)․
Աստուած և վասն մեր էջ յանարգութի, այլ
կայ յիւրում բնութեն․ որպ և ինքն իսկ ա-
սաց, (2) Ես նոյն եմ՝ և ոչ փոփոխիմ։ Յայտ-
նի եղև և մերն մեծութի․ (3) ունելով ըղ-
պատկեր ծառային՝ զգեցաք զպատկեր երկ-
նաւորին։

Իսկ զայս՝ ինքն փրկիչն յայտնեաց ասելով,
(4) Ես եկի՝ զի զկեանս ունիցին, և առաւել
ես ունիցին․ այսինքն ոչ եկի զտուեալն 'ի
բաց բառնալ 'ի սկզբանն գոյացութեան
նորա, այլ զաստուածատեսակադրմս զիմ 'ի վե-
րայ նորուն հաստատել։ քանզի ոչ (5) եկի
յեղծանել ստեղծօղն զստեղծեալն յիւրմէ
ստեղծուած, այլ վերաստեղծել զնոյն և
նորոգել։ Իսկ այսպէս 'ի գոլոյն ոչ 'ի բաց
կալով՝ մարդկայինն և աստուածայինն այնուհե-
տև ասին 'ի միաւորութեն և որոց ոչն էին
գոյացութե։ այս է՝ բանն աստուած մարդ լինե-
լով և ասելով՝ մնայց և այնպէս աստուած․ և աստուա-
նալով մարդս և անուանելով՝ ոչ երբէք
զիւրն 'ի բաց կորոյս գոյացութի․ որպ երա-
նելին եփրեմ ասէ․ Ոչ փոփոխելով մար-
մինն յանմարմնութի, այլ ունի զինքեան ըղ-
մարմինն՝ որպ ծնաւ 'ի կուսէն․ և առաւել
քան զմեզ, ըստ որում յաստուածն բան միաւորե-
ցաւ։ Արդ՝ յայտ է թէ անհասանելի միա-
ւո

* բնութի աստուածութե։ Զի զոր օրինակ ած ոչ փոխի ո-
* ղորմութեամբ, նոյնպէս մարդն ոչ ծախի արժանա-
* պատուութբ։ ||

(1) Լուսաւորիչն յագաւթ․ 'ի տպ․ յերես 159։
(2) Ղուկ․ իբ․ 39։ Մաղաք․ գ․ 6։ (3) ա․ Կորնթ․
ժե․ 49։ (4) Յովհ․ ժ․ 10։
(5) Եյէ․ Թերևս՝ էյն․ ը պահանջելոյ իմաստից բանին։

ւորութիւնն , և ոչ բնութեանց այլայլութիւն առաջնորդեն մեզ զմին ասել բնութիւն մարմնացեալ բանին :

Օ սոյն և մեծահամբաւն Կիւրեղ աւանդէ Աղեքսանդրի հայրապետ՝ ասելով. (1) Ո՛չ ՚ի մարմնոյ բնութիւն փոխաբերեալ բանին , այլ և ոչ մարմնոյն ՚ի նորայն , այլ ՚ի յատկութեանն ըստ բնութեան երկաքանչիւրոյ մնացելոյ և իմացելոյ , ըստ այժմուս մեզ աւանդեցելոյ բանին անճառելի և անասելի միաւորութեամբն՝ մի մեզ եցոյց որդւոյ բնութիւն : Արդ ՚ի յատկութեան ըստ բնութեան ասել , զանշարժն մնալ ասէ յերկաքանչիւրսն՝ որոց էինն : Իսկ ՚ի գերազանց և ՚ի սքանչելի միաւորութեան ոչինչ է արգել միութեան զնմին խոս-

տո

(1) Այս բան մեծին Կիւրղի է ՚ի Է. Թղթոյն որ առ Սուկեսոս ( կամ առ Սեկունդոս ) ՚ի տպ. 418. բայց ոչ՛ յայտ է՝ չէ զի Թարգմանութեան Ստեփաննոսի Սիւնեցւոյ՝ ( որ փոքր մի յետոյ է ժամանակաւ քան զԹարգմանիչսն , ) այլ է ըստ հնագոյն Թարգմանութեան եղելոյ նախ քան զՍտեփաննոս. և բաղդատելով մեր ընդ յունական բնագրի՝ Ճշգրտագոյն և կամ յաւէտ բառական Թարգմանութիւն գտաք զբերեալս յիմաստասիրէն քան զՍտեփաննոսին ըստ որոյ է տպագրեալն. զոր և առ յայտնի կացուցանելոյ՝ դիցուք աստանօր բաղդատութիւն ձեռագրաց * Այլ և ոչ ՚ի մարմնոյ բնութիւն փո-
* խադրեցաւ ( կամ՝ փոխարկեցաւ ) բանին բնութիւն ,
* և ոչ մարմնոյն ՚ի նորայն . այլ յիւրում բնութեան
* իւրաքանչիւր ուրուք մնացելոյ և իմացելոյ ( յորի-
* նակ մի՝ որպէս և ՚ի տպ. պակասի՝ և իմացելոյ ) ըստ
* այժմուս առ ՚ի մէնջ առացելոյս բանի ( կամ՝ առացե-
* լոց բանից ) անճառելի և անապական միաւորութեն՝
* մի եցոյց զորդւոյ բնութիւն :|| Ուր արժան է և զայն յուշ առնել , եթէ զի զյունական բառն Կիւրղի ἀφράστως , որ նշանակէ անճառելի , ընթերցեալ է Ստեփ. Սիւն. ἀφθάρτως , որ նշանակէ անապական : Իսկ փոխաբերեալ բառդ՝ է նիւթական Թարգմանութիւն յունական բառին μεταπεφύτηκεν . զոր ըստ իմաստիցն Թարգմանէ Ստեփ. Սիւն. փոխադրեցաւ կամ փոխարկեցաւ :

տուլանել 'ի քո՛ մի դէմ, մի անձն, և մի նո՛ր
բնութի (1). զի որ 'ի Հօրէ անմարմին բանն
էր, 'ի մարմնոյ սրբոյ կուսէն՝ այսինքն 'ի
մարդկային բնութենէս՝ մարմին զգեցաւ. և
զնոյն միաւորեալ ը̄ իւրում դիմի և բնու-
թե̄, մի դէմ, և մի բնուի̄ ասի և հանդերձ
մարմնովն: Ո՛չ եթէ անգոյ և կամ աղանց
մնաց և անձին, (2) և թանց բնութե̄ զմերն
ընկալաւ 'ի կնոջէ, այլ ը̄ մե̄ր կատարեալ
առ

(1) Խորագոյն զննէ իմաստասէրն զձայնն կիւրղի և զմիտս նորա, զի մի՛ ոք 'ի տգիտաց ծայրայեղ խառնմամբ անկանիցի միանգամայն 'ի Նեստորի և յեւտիքի կարծիս: Եւ թէպէտ իմաստն է յայտնի միօրինակ ջաղջիչ ապանդոյ Նեստորի և Եւտիքի. բայց ձայնն է համաձայն. վա՛յ ծանիր, զի փիլիսոփայքն 'ի վարդապետս՝ նմանեալք կիւրղի և յոհաննու իմաստասիրի, յորժամ խօսին 'ի վերայ բնութե̄ 'ի վերացեալն՝ յատկապէս վարեն զբառդ բնութի՝ ըստ որում է էութի ինչ զանազանեալ յայլմէ էութէ, զոր օրինակ բնութի մարդոյ 'ի բնութէ անբանից. և անսահման բնութին ածային՝ 'ի մարդկային բնութենէս: Իսկ յորժամ խօսին 'ի վերայ բնութե̄ 'ի թանձրացեալն առնուն զբառդ բնութի և անձն 'ի նոյն միտս, զի կամին 'ի մէջ բերել զէակն և ոչ զէութիւնն. և ըստ այսմ 'ի մի կարգ դասին առաւելոր ձայնքս՝ դէմ, անձն, և բնութիւն: Բայց առ լաւ ևս իմացուցանելոյ զկրան 'ի վերայ բերէ իմաստասէրն * Ապա ուրեմն մի բնութի և մի դէմ քնի եթէ պարտ » է համառօտագոյնս ասել, ոչ է ըստ նոյնութեան » բնութե̄, || այլ ահա զհամաձայնութիւն բանից՝ մեկնելով զձայնն կիւրղի մի բնութիւն, որպէս թէ գրեալ էր մի դէմ քնի: Այլ զի մի ոք բանակռիւ լինիցի 'ի վերայ ձայնի, քաջ մեկնէ և զմիտս կիւրղի, թէ մի բնութի ասելն՝ * Է որպէս բաղում անգամ տացի, ըստ ան- » ճառ միաւորութե̄ բանին ընդ իւրում մարմնի: || Զոր և դարձեալ եզրակացուցանէ՝ թէ * Ահաւասիկ » ըստ անճառելի և անպարփակելի խառնմանն և միա- » ւորութեան համարձակիմք ասել մի բնութի քնի, և » ոչ ըստ այլում իմիք եղանակի: ||

(2) Ասիցէ ոք առաւնօր. մի արդեօք իմաստասէրն փախչելով յեւտիքեայ՝ ձայնակից լինիցի Նեստորի, ընծայելով քնի զմարդկային անձն. զի զի՞նչ է ասելն,

առնլով՝ առ իւրն միաւորեաց կատարելութի բանն որ 'ի Հօրէ . և այսպէս առ մի կատարեալ՝ զմի ունելով կենդանութի և զդէմ : Ո՛չ 'ի միութեն զերկաքանչիւրոցն ուրանամ զկատարելութի , և ոչ յաղագս երկաքանչիւրոցն կատարելութե զմին հրաժարեմ ասել կատարելութի . միութի յանայլայլութե , և (1) անայլայլութի 'ի միութե խոստովանելով : Ապա ուրեմն մի բնութի , և մի դէմ քսի՝ եթէ պարտ է համառօտագոյնս ասել , ոչ է ըստ նոյնութե բնութե , կմ ըստ (2) միանձնականութե . զի այս զերկոսին 'ի միասին գրեթէ զոկեսցէ , զած 'ի մարդն լինելոյ , և զմարդն յածանալոյ . այլ է՝ որպ բազում

ան՟

* Ո՛չ եթէ անդէմ և կամ առանց միաց և անձին, և , Թանց բնութե զմերն ընկալաւ 'ի կնոջէ : || Յայտնի է պատասխանին, զի բառս անձն է համաձայն, զի երբեմն նշանակէ դէմ կամ անձնաւորութիւն, այն է ըստ յունաց πρόσωπον պռօսօբօն, կամ ὑπόστασις իբօսդասիս . և ըստ լատ . persona բէռսօնա . և ըստ այսմ մի դէմ խոստովանի 'ի քս, և բազմօք անդէ յընթացս ճառիս, որպէս տեսցես և զկնի : Իսկ երբեմն նշանակէ հոգի կամ շունչ ( բնական ) որ յունարէն ասի πνεῦμα բնէւմա կամ ψυχή փսիխի, և ըստ լատ . anima անիմա կամ animus անիմուս, և spiritus սբիրիդուս : Արդ՝ յայտ է թէ 'ի քս գոյր և բանական հոգի, և ահա զայսմանէ խօսի աստանօր իմաստասէրն : 'Ի նոյն միտս ունի ասել և 'ի վայր . * Ո՛չ , է ըստ նոյնութե բնութե, կամ ըստ միանձնականութե . || որ է ասել՝ ըստ միահոգիութե, որպէս դնէր ապողինար՝ ուրացօղն զմարդկային հոգին քսի :

(1) Անայլայլութե . յօրինակին անայլութե :

(2) Իմացիր 'ի վերոյ 'ի ծանօթութեան, թէ ձայնս միանձնականութե՝ դնի աստանօր նշանակութես միահոգիութե՝ այն է մոլորութի ապողինարի՝ զոր կշտամբէ իմաստասէրն : Այլ 'ի հաստատութի ասացելոցս ծանիր, զի որ գրի 'ի մատթ . իէ . 38 . * Տրտում է հոգի , իմ . || նոյնն 'ի մարկ . ժդ . 34 . գրեալ կայ * Տրտում , է անձն իմ . || Իսկ իմաստասէրս բերէ զայն 'ի տարբերու 'ի սեբերիանոսէ այսպէս . * Տրտում է շունչ իմ : ||

անդամ ասացի, ըստ անճառ միաւորութեան բանին ընդ խոնարհ մարմնի: Որպէս և Տէրն Գրիգոր ասէ (1). Միացաւ 'ի մարմնի բնութե,

և

Զայլ բազում վկայութիւնս տեսցես 'ի բառարանն մեր, մանաւանդ 'ի նորոգ յօրինեալն ընդարձակագոյն և լրագոյն, որ ունի տպագրիլ ըստ ժամանակին: Արդ թողեալ զայն, զի և առ յոյնս առաւել հոմանշայն էր առ նախնեօք բառս հիբօստասիս, զի թէպէտ առ մեզ թարգմանի անձնաւորութիւն. բայց առ նախնիս գտանի թարգմանեալ նաև էութիւն, մանաւանդ 'ի գիրս Կիւրղի: Պատճառն է' զի յունական ձայնն ստուգաբանի ենթակայութիւն կամ ստորակայութիւն. վասն երբեմն նշանակէր զէութիւն կամ զգոյացութիւն' որ ըստ ինքեան ենթակայանայ, և երբեմն զանձն' որ է ենթադրեալն բանական գոյացութիւն: Որպէս և առ լատինս բառդ substantia սուբստանցիա թէպէտ առ մեզ թարգմանի գոյացութիւն. բայց յառաջին ժամանակս հոմանշայն էր ընդ բառիս subsistentia սուբսիստենցիա, որ այժմ թարգմանի ենթակայութիւն կամ անձնաւորութիւն: Զայսցանէ ճշմարտագոյն գրեալ է մեր յածաբանութեն, զոր Տր յաջողեսցէ 'ի դէպ ժամանակի 'ի լոյս ընծայել: Առ այժմ օրինակ լիցի այն, զի 'ի գործս ժողովոյն սարդիկեայ գրեալ է առ Թէոդորետոսի. պատմ. բ. * Եւ եթէ ոք խնդրէ, մի իցէ հիբօստասիս որդւոյ, խոստովանիմք' թէ նոյն այն է, որ միայն է խոստովանեալ հօր:|| Աստ հիբօստասիսն եդեալ է փոխանակ էութեան կամ գոյացութեան. ապա թէ ոչ' եթէ անձնաւորութիւն իմասցի ոք, լինէր սաբելեան խառնակութիւն դիմաց 'ի մէջ հօր և որդւոյ: Եւ Մարկոս Վիկտորինոս ափրիկեցի 'ի սխոտանութեանն յղ. համադրոյ. ասէ. * Յոյնք ուսիա կամ հիբօստասիս ասեն, մեք միով անուամբ լատինաբէն սուբստանցիա ասեմք:|| այս ըստ հին ոճոյ, ապա թէ ոչ այժմ զոր յոյնք οὐσία ուսիա ասեն, առ լատինս երբեմն essentia էսսենցիա ասի, այսինքն էութիւն, և երբեմն սուբստանցիա, այսինքն գոյացութիւն: Իսկ որ առ յոյնս ասի հիբօստասիս, առ լատինս ասի սուբսիստենցիա, այսինքն ենթակայութիւն: Այլ ըստ հին ոճոյ վարելով ասաց և Զաքարիա կաթողիկոս հայոց 'ի ճառն ծննդ. թէ երրորդութիւն է * Մի բնութիւն և էութիւն և ենթակայութիւն:|| ուր պարտ է իմանալ բացարձակ ենթակայութիւն, որ լու ես ասի 'ի մեզ էութիւն, կամ ինքնութիւն. և ոչ լինի իմանալ առնչական ենթակայութիւն, որ է անձնաւորութիւն:

(1) Լուսաւորիչն յաղօթ. 'ի յաղ. յերեսն 156.

և խառնեալց զմարմինն ընդ իւր աստուածութեանն ։ Եւ հաւաստիկ է անճառելի և (1) անսպարփմանալի խառնմանն և միաւորութեանն համաձայնիմք ասել մի բնութիւն Քրիստոսի, և ոչ ըստ այլում իմիք եղանակի ։

Զայն և երանելին Յուլիոս ասէ Հռովմայ Հայրապետ (2). Որ ասէ զմարմինն առնելի առ աներկն Աստուած միաւորութ՝ ածային և երկրպագեալ, և ս երկախումբն իբրև մի անսանելի Աստուած, երանեալ եղիցի ։ Եւ երկոսին հաւասարապէս ունի երանութեանս բան (3).

Եր-

(1) Անսպարփմանալի, ըստ բառին նշանակէ անպարագրե-բար ըմանալի, կամ զոր ոչ է հնար իմանալ կամ ըմբռնել պարագրելով ըստ բոլորին. և 'ի նախնեաց 'ի թարգմանութիւնս դնի փոխանակ յունական բառիս ἀπερινόητος, [illegible]. որ զնոյն նշանակէ ։

(2) 'Ի թուղթն առ Պրոսդոկիոս. որ կայ տպագրեալ յն. և լտ. 'ի հաւաքմանս ժողովոց հատ. Է. 1250. հանդերձ ծանօթութեամբ Լուդովիկոսի Մուրատորի ։ Իսկ զբերեալ հատուածն յիմաստասիրենն նորա թարգմանութեամբ 'ի յունականէն դնեմք աստ յաւելեալ պարզութիւն, որ է այսպէս. * Որ ածային ասէ զմարմինն մը միաւորութեն ընդ աներկն ածյ, և երկրպագէ ըստ համերկրպագանելութեան՝ իբրև միոյ աներկի ածյ, երանելի եղիցի ։|| Վերջին հատուածն պարզի այսպէս. Եւ երկրպագէ քսի իբրև միոյ անձին ածայնոյ՝ յորում երկրպագանելի բնութիւնք դոն միաւորեալ ։ Զյունական ձայնս κατὰ τὸ συναμφότερον [illegible] τὸ [illegible]՝ բառական թարգմանեցաք ըստ համերկ[illegible] ։ Տես և զյետագայ ծանօթութիւնդ ։

(3) Զարմանալի աստանօր ընդ ողջմտութիւն իմաստասիրիս զոյգ ընդ վարդապետին իւրոյ Թէոդորոսի, զի որպէս նա յուղիղ միտս վարէ զդժուարալուր բառդ [illegible], 'ի կիր արկեալ յաղագս թարգմանութեան տումարին ըստ ... փոխանակ ձայնիս συναμφότερα [illegible], (զորմէ տես 'ի ծանօթութիւնս տումարին եր. 15, և 16.) սոյնպէս և իմաստասէրն յուղիղ միտս յառաջ բերեալ զայն 'ի թղթոյն յուլիոսի՝ գեղեցիկ եզրակացուցանէ, * Երկախումբ խոստովանեալ ըստ բնութեանց, և մի ըստ միաւորութեան || են ։

երկախումբ խոստովանեալ ըստ բնութեանց, և մի ըստ միաւորութեանն ։ Ո՛չ զմին աւելով՝ զբնութեանցն խցանել կամակորեսցուք զաղեկերս, և մի՛ յաւելով անտի զերկախումբն՝ պատառել կամելով զմիաւորութեանն պատմուճան . այլ բարեպաշտաբար առ երկոսինն զալ գիտացեալ, միութիւն ձայնաչել զբնութիւնն, և 'ի բնութեանցն անտի ելանել առ միաւորութիւն ։ Որպէս Հրաշալին առէ յոհան կոստանդնուպօլսի, (1) Ո՛ւսթէ՞ն խոստովանիմ, և ոչ քայքայումն ինչ և լուծումն այսր բնութեան յայն, կամ այնր յայս . այլ միացեալ, մի լեալ ։ Երգ՝ մի լեալ, որպէս յառաջն ասացի, ըստ միաւորութեան գոլ առէ զերկեակն և զանէրկելին, և ոչ ըստ համադրութեան . զի որպէս արդեւք եղիցի՝ որք ոչն են ։

Բայց սակայն և զայս լսեմք 'ի ձէնջ ասացեալ . Ո՛ւ բնութիւն զնծայինն իսկ ասեմ, զոր 'ի հօրէ ունէր զիւր զիսկական բնութին . զի ոչ ասի յարարածականացս ոք բնութի . քանզի արարչականն ասի միայն բնութի . իսկ զմարմինն՝ մարմին քո ասեմք, և ոչ բնութի քո ։

փախ-

(1) Բերէ զվկայութիւս յակերբերանէ և անանուն հեղինակին ձառէ՝ որ ընդդէմ բաժանողաց առ մաւշեղ բազդրատունի 'ի ձառընտիրն, յասելն՝ * Գրէ և ոսկե-
* բերանն կոչեցեալ եկեղեցւոյ . Մ՛ի շփոթեսցուք առէ,
* և մի անջրպետ 'ի մէջ արկցուք . մի զի միութին խոս-
* տովանիմ և ոչ քայքայումն ինչ և կամ լուծումն այս
* բնութեան յայն, կամ այնր յայս, այլ միացեալ ասեմ,
* և մի լեալ ։ || Զտեղին ուստի առեալ է վկայութիւս ոչ կարացաք գտանել 'ի յն . և 'ի լտ . գործս ոսկեբ . որպէս և այլ վկայութեանց ինչ բերելոց յխոտտասխեն, զորոց չալէմք ինչ 'ի ծանօթութիւս ։

828

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ... ՖՈՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

Փախչիս (1) 'ի բնութեդ. անուճանէ, ընդ նմին և յերկուցդ ասելոյ. և ոչ գիտես, թէ մարմին ասելով՝ յերկոսին 'ի ներքս ըմբռնիս յորոց փախչիսդ: Արդ զնոյն՝ որովք բարեպաշտելդ կարծես, հակառակ ընդդէմ քեզ եդից: Զ մարմինն՝ մարմին բանին ասելով, և զբանն ասացեալ մարմին ունել, զինչ այլ ինչ թուիցիս ասել, եթէ ոչ կըրկին: Եւ դարձեալ զբանն 'ի հօրէ ասելով՝ զհօրն տայցես նմա զբնութի. իսկ զմարմինն 'ի մարդկանէ ասելով՝ զինչ ունել ասես նմա բնութի, եթէ ոչ զմարդկան: Բայց կարծեմ թէ կամիք և ոչ մարմին քրի ասել. զի թէ զմարմինն ճշմարտութե խոստովանէիք ունել քրի, և զայն 'ի մարդկանէ և մարդկային, զնոյն և բնութիւն մարդկային ոչ արդեւք խղճէիք ասել: Քանզի նոյն է մարմին մարդկային ունել քրի, և բնութի մարդկային. և քն առանց միաւորութեն ոչ ասի քն յն, այլ աճ բան: Որպէս սրբն բասիլիոս ասէ. Զի թէ ասիցէ ոք զմարմինն բնութի բանին, և զբանն բնութի մարմնոյն, ամպարշտութե լի է այսպէս ասացեալքն: Իսկ եթէ զմի և զնոյն քն յերկուց խոստովանեացի ասել բնութեանց, այս ինքն աճային և մարդկային, ընդէր զարհուրիս և զայրանաս, և այլանդակ և հայհոյիչ շարադրութե զբարեպաշտաց պղտորես զլսելիս: Քանզի ասես, որ 'ի հօրէ գոյացեալ անձնն էր, նոյն

անձ-

(1) Այս տեղի պանծալի, զոր բառ առ բառ ճոխագոյն բերէ 'ի վկայութի գրիգոր կաթողիկոս 'ի թուղթն առ տուտէորդին, տես զոյնս նշ 'ի յառաջաբանութե գրքոյս, 'ի վկայութիս նախնեաց:

անձնաւորեալ 'ի սբ. կուսէն (1) . և որ 'ի հօրէ բնութիւն էր, նոյն բնաւորեալ եղև յարգանդի կուսին :

Եւ սակայն գոհութիւն այ, (2) որ յայտնէ զխորս խաւարի, և հանէ 'ի լոյս զստուերս մահու . զի թէպէտ և շատ ջանացար կուրացուցիդ իմն արահետիւք ծածկել և մթացուցանել զհաւաքեալ 'ի քեզ զդառնութե մաղձ, այժմ յանծայնոյն բանադատեալ յանկարկութէ տեսչութեն՝ 'ի վեր բղխեցեր : Արդ՝ զիա՞րդ անձնաւորեցաւ 'ի կուսին անձն որդւոյ . թողլով զիւր գոյութին՝ յայլում գտաւ գոյութե, որպէս պանդըրոյն ասէ, եթէ յիւրումն մնալով՝ զերևութական միայն զձևն զինքեամբ արկաւ, առաջօք և ձևով ևեթ ցուցեալ զմերն 'ի կուսէ . որպէս եւտիքէսն (3) երկրորդ յիմարաբար բարբառի՝ ասելով . Խոստովանիմ ըզբանն ած յարգանդի կուսին կերպացեալ՝ տպաւորեալ 'ի պատկեր և 'ի ձև մարդոյ եղեալ, այլ ոչ եթէ յարարածական բնութէն ինչ յինքն խառնեաց . քան զի անխառն է ածութին և անյօդ : Տեսանես, որպէս համաձայնք առ միմեանս գտանիք յամպարշտելդ : զի՛ և ասես, 'ի հօրէ անձնն որդւոյ անձնաւորեցաւ 'ի կուսին . և նա ասէ, ոչ ինչ խառնեաց 'ի կուսէն յանխառն ածութիւնն :

Եւ

(1) Որպէս թուի՝ պարտէ լինել 'ի սբ կ...էն, զի այսէ բան հակառակորդին, որ ոչ ասէր 'ի կ...էն, այլ 'ի կ...էն, որպէս յայտ է 'ի բանէն որ յերես 5, և յայլ բանից իմաստասիրին :

(2) Յովբ . ժբ . 22 :

(3) Տես զծանօթութիւն 2 . որ յերես 8 :

Եւ եթէ ոչ գոյուի ինչ անձնաւոր (1) զմերս 'ի կուսէ ընդ ինքեան միաւորեաց բանն, զիա՞րդ ինքն զինքն մարդ եւ որդի մարդոյ անուանեաց: Ո՜վ խորհուրդ եւ տղայ երեւեալ խանձարրապատեցաւ, եւ կաթնաբոյծ եղանիւր, եւ առ կատարելութիւն 'ի վեր ընթանայր աճմամբ հասակի, ըստ մեծին աթանասի ուղղափառ դաւանութեան. Որքան ինքն առ հրամայեաց՝ զբնութեան կատարելով՝ յինքն ընկալաւ, որքան կամեցաւ. այս է. ծննդեան 'ի կնոջէ, աճման հասակի, ամաց թուոյ, աշխատութեան, ծարաւոյ եւ քաղցոյ, եւ քնոյ, եւ տրտմութեան, եւ մահու եւ յարութեան:

Այսոքիկ ամենեքին՝ նմանութիւնք եւ երեւոյթք թուիցին քեզ եղեալք 'ի քէն, թէ ճշմարտութիւն: Ապա եթէ ճշմարտութիւն, որպէս եւ է իսկ. քանզի անհնար է անսուտն այ սուտ իւիք կեղծաւորել 'ի գործս իւր. զիա՞րդ իշխես ասել զանէրեւոյթ եւ զանմարմին անձն որդւոյ մարմնաձեւ այպէս անձնաւ յարգանդի կուսին. եթէ ոչ զկատարեալ մեր բնութիւն 'ի կնոջէ յինքն ընկալեալ՝ ընդ

(1) Գոյութիւն ինչ անձնաւոր. որ գոյացութիւն կամ էութիւն հագէւոր, որ նմանապէս յառաջեալոցս 'ի վեր անդր յերես 13 'ի ծան. 2, եւ 14 'ի ծան. 2: Զի թէպէտ եւ գեղեցիկ որոշեալ է 'ի մեզ նշանակութիւն եզերացս էութիւն եւ գոյութիւն. այլ քանզի առ յոյնս զերկոսին եւ նշանակեր բառս οὐσία ուսիա, նոյնն համաձայնութեամբ դնէ երբեմն եւ իմաստասէրն զգոյութիւն փոխանակ էութեան, որպէս եւ շնորհալին 'ի թուղթն որ. առ մանուէլ կայսր, զէութիւն դնէ փոխանակ գոյութեան, կամ գոյակի յասելն, * Ո՛չ ոմն եւ ոմն այսոքիկ, այլ մի էութիւն եւ մի անձնաւորութիւն 'ի յերկուց բնութեանց 'ի մի քս միացելոց անշփոթելի եւ անբաժանելի միաւորութեամբ: ||

ընդ ինքեան միաւորեաց բանն ա՟ծ առաքեալ 'ի հօրէ ։

Եթէ այդպէս ասեմք՝ ասեն, երկուս լինիմք ասացեալ դէմս, և երկուս բնութիւնս ։ Դարձեալ փախչելով 'ի մնոտի երկիւղէ՝ 'ի մեծագոյնն անկանին չար ։ Եթէ յերկուց ըստ բնութ՟ն ոչ կամին ասել զմինն, կարի յոյժ չարաչար ըստ բնութ՟ն զմին դաւանին ասացեալ բնութիւն ։ Այլ անմարմին բնութիւն ա՟ծային բանին զմարմնական բնութիւն 'ի կուսէն ընկալեալ՝ ընդ ինքեան միաւորեաց ․ որ է ըստ բնութ՟ն յերկուց՝ յա՟ծային և մարդկային ․ իսկ ըստ միաւորութ՟ն մի ։

Զի եթէ այս երկուք գեղեցկագոյն հաւատոյ ոտնք առ ճշմարտութիւն 'ի վեր կանգնեալ ոչ հաստատին, առ որ և յենուցուս առ մինն 'ի նոցանէ՝ կաղ դաւանիս առ խոստովանութիւն ճշմարտութ՟ն, այլ կատարեալ ըստ երկաքանչիւրոյն գիտելով զերկուսն, ըստ միաւորութ՟ն՝ մի կատարեալ, մի դէմ, և մի որդի ա՟յ խոստովանելով, որպէս ս՟րն բասիլիոս ասէ (1) ․ Երկուց գոյացութեանց կատարելոց միաւորութիւն ։

Առ

(1) Զայս վկայութիւն բերեն և վարդապետքն հայոց առ խաչիկ կաթողիկոսիւ 'ի թղթին առ մետրապօլիտն սեբաստիոյ, առ ասողկայ․ գ՟․ 21 ։ որպէս և 'ի ժողովական թղթին գրիգորի կաթողիկոսի առ մանուէլ կայսրն, հանդերձ յաւելուածով (տպ․ 'ի սանկտպետրպուրկ ընդ թղթոյ շնորհալւոյն յէր․ 164 ։) այսպէս ․
* Որպէս և մեծն բասիլիոս՝ ընդդէմ ապօղինարի՝ որ
* զմարդկային հոգի արտաքս հանէր 'ի ա՟նէ, և կիսա-
* կատար ասէր զնա 'ի մարմնաւորութ՟ն, այսպէս ա-
* սէ, երկուց գոյացութ՟ց կատարելոց միաւորութ՟ի ։
* Եւ զի զգայութիւն անշփոթ պահեաց՝ յորժամ եհարց
* ապօղինար՝ վ՟ ք՟ի, թէ միտս մարդկային ունէր՝
* կարէր և մեղանչել, պատասխանէ ս՟րն, թէ ոչ էր

Եւ որ դու հակառակաբար ընդդէմ յա-րուցեալ` գրեցեր ՚ի քում շարադրածութեանդ, և ասես. որ ՚ի հօրէ բնութիւն է՝ նոյն բնաւորեալ է ՚ի ՙսբ. (1) կուսէն : Մինչ ՚ի հօրէ բնութիւն էր, զի՞նչ այլ ինչ բնութիւն յարգանդի կուսին գոյանայր : Ո՛ մնա-ած, յո՛րքանեաց չարաչար հայհոյութեանց պտոյտս ընկղմիս` զայդ. այդպէս ասելովդ : Մե՛ք հարքն ՚ի նիկիա ժողովեալքն ասացին` զնոյն բնութիւն հօր ընդ մերոյ փրկչին ծնա-մարդացեալ ՚ի մարիամայ սրբոյ կուսէն հոգ-ւով սրբով (2). և ապա ՚ի շար արկեալ թուէն զկատարելութիւն բնութեան մերոյ. հոգի, մարմին, և միտս. և նովին մարմնով համբարձեալ յերկինս. և նովին մարմնով գալոց է ասացին : Իսկ դու ասես. որ ՚ի հօրէ բնութիւն`

• միացեալ է՛ ածութեան` միաքն՝ այս : || Այս տրամախոսութիւն ընդ ապողինարի` որ ՚ի գիրս հայոց ընծայի մեծին բարսղի, ՚ի յունական մատեանս ինչ ընծայի աթանասի, որպէս և տպագրեալ իսկ է ՚ի յն. և ՚ի լտ. գործս աթանասի (տպ. փառիզայու հատ. բ. եր. 558) ընդ անհարազատս : Մեք ՚ի քննչաց ընծայեն զնոյն և մաքսիմոսի վկայի որ ՚ի է դարու, բայց հին թարգմանութիւն հայերէն ունոյնացուցանէ զկարծիս սոցա : Այլ և ընծայեն զնոյն թէոդորետոսի. զորոց չէ տեղւոյս քննել զբանս :

(1) ՚ի ՙսբ կուսէն. այսպէս յօրինակին, բայց որպէս թուի՝ պարտ է լինել ՚ի ՙսբ կուսէն, զոր և կշտամբէ իմաստասէրն ՚ի բազում տեղիս :

(2) Յանուն նիկիական ժողովոյ բերէ զլուսաւորչեան հանգանակն մեր` իրաւամբք. իբր զի նիկիականն հիմն է հանգանակին մերոյ (որպէս և այլ հանգանակաց.) յորոյ վերայ եդեն ՚ի սբյ լուսաւորչէն և ՚ի հետեւողաց նր այլ և այլ բացատրութիւնք` (յորոց կարգի է և հաւատամք առաջինկայ.) իբրև ՚ի դէմ նախապատրաստ ընդդէմ թուոնից հերետիկոսաց` որ կարէին յաւնել բառ ժամանակին, որպէս և յարեան իսկ. այլ յամօթ լենին յերեւաց նորաքանչիւր բառից հանգանակիս :

թէին՝ բնաւորեցան յարգանդի կուսին. և յաղագս այնր ասի մի բնութիւն։ Եթէ յարգանդի կուսին բնաւորեցաւ, ապա 'ի հօրէ ոչ էր բնաւորեալ։ Դարձեալ՝ եթէ յարգանդէ կուսին սկիզբն էառ լինել մի բնութիւն ընդ հօր, ապա նախ քան զխոնարհելն յարգանդ կուսին՝ օտար գոյր բնութեամբն հօր։ Եւ զայդ այդպէս զաւզակաւորելովդ՝ արիոսի եղեալ գտանիս չարափառութեան զուգաձայն։ Դարձեալ՝ զմի բնութիւնդ ապաքէն ընդդէմ երկուց բնութեանս ասողացն ասես դու. և որ երկուսն ասէ բնութիւնս, զաստուածայինն ասէ և զմարդկայինն (1). դու զո՞վ ոք 'ի նոցանէ ասես՝ զմիդ ասելով, կամ ըստ որո՞ւմ յեղանակի։

Արդ այսպէս շամբուշ խորհրդով բանդագուշիս, և (2) ոչ գիտես գտանել զշաւիղս

ճշ

(1) Զայս բան իմաստասիրին գեղեցիկ ընդլայնէ սբն Ներսէս Լամբրոնացի յասելն զյունաց՝ յառէնար. 'ի սպ. յերես. 32. * Զմի քն յերկուց ճանաչեն բնութեանց. վն զի ած է և մարդ, և ոչ թէ 'ի ճանաչելն զանճառ խառնումն բաժանեն..: Արդ միոյ քնի՝ որում մեք ածութիւն ասեմք, նորա բնութիւն 'ի վերայ յաւելեալ զէութեան հաստատութիւն յայտ առնէն. և որում մեք մարդկութիւն, նորա դարձեալ յաւելուածով բնութեան անուան՝ զէութիւն մարդոյն առոգեն. և զմիութիւնն 'ի վերայ սոցին՝ հաւասար մեզ ամբողջ հաւատան, չունելով անպատ. քննութիւ՝ առայս ինչ մեզ նիւթ հակառակութեան:|| Ո՛չ այլ. դվկայէ և երանելին գերմանոս 'ի թուղթն առ հայս՝ յասելն՝ * Երկուս բնութիւնս խոստովանելով 'ի վերայ միածնի որդւոյն այ տն մերոյ և փրկչին յսի քսի, յետ ըստ ամի նմանելոյ նր մեզ՝ առանց մեղաց, ոչ այլ ինչ ասեմք կամ իմանամք, բայց միայն՝ զի ած գոլով և հօր համագոյ՝ մարդ եղև ճշմարտապէս մարդկան համագոյ:||

(2) Առակաց. իբ. 20:

ա՟ծոյ զդիւրինս · զի բանն ա՟ծ՝ (1) գոյութիւն հանդերձ մարդկային բնութ՟բ ընկալեալ յանարատ արգանդէ կուսին՝ ընդ ինքեան միաւորեաց անճառապէս գոյութն՟ և բնութն՟, ոչ զյառաջագոյն գոյացեալն · քանզի Օ գոյութի՟ մարմնոյն՝ միաւորութ՟բ բանին ծանեայ, ասաց ոմն 'ի ս՟րց · և այսպէս ասի մի դէմ, և մի բնութիւն բանին մարմնացելոյ ։ Այ ըստ ինքեան ասի մի բնութիւն և առանձնաւորութի՟ (2) · քանզի զայս 'ի հօրէ իսկ անժամանակաբար յինքեան բերէր բանն ա՟ծ · այլ ըստ անճառ տնօրէնութեն՟ 'ի կուսէն ։ Որպէս ս՟րն բասիղիոս ասէ (3) · Օնեալն 'ի մարիամայ էութիւնն 'ի նորա բնութենէն՝ ոչ էր ա՟ծ բնաբար, այլ միաւորութ՟բ տնօրէնութեն՟ · վ՟ զի որ 'ի բնութէ հօր էր ա՟ծ՝ բանն, 'ի բնութէ մարիամայ էառ զպատկեր ծառայի, և պտուղ որովայնի նորա գտաւ եղեալ ։ Եւ զայս նա՛ ։

Ապա ուրեմն՝ ոչ բնութի ա՟ծային բնաւորեցաւ յարգանդի կուսին, որպ՟ դու դանդաչես · այլ ա՟ծն բան 'ի հօրէ՝ զմարդկային զգեցաւ բնութի՟ 'ի կնոջէ ։ Որպէս և մեծն աթանաս ասէ (4) · Ա՟ զի բնութի մարդկութեանս

(1) Վ՟ ձայնիս գոյութե՟ տես 'ի վեր յերես 20 · 'ի ծան · 1 · և յաւել զայն ևս, թէ գոյութն՟ տաւ մարդկային բնութն՟ ոչ է ըստ մտաց սկովտականաց, այլ՝ է յայտարարութն՟ իրական և ճշմարիտ գոյաւորութե՟ ։

(2) Վ՟ ձայնիցս՝ բնութե՟, դէմ և անձնաւորութե՟ կամ առանձնաւորութե՟ ասացաւ վերագոյնդ յերես 13, 14, և 15 · 'ի ծան · 1 · 2 ։ տես անդ ։

(3) 'Ի վերոյիշեալ տրամախօսութե՟ · հատ · ե՟ · 461 ։ տես յերես 21 · 'ի ծան 1 ։

(4) Ջբաղումս 'ի վկայութեց ս՟րյն աթանասի՝ զորս բերէ իմաստասէրն, մարթ է համարել 'ի կարգէ այնց գործոյ՝ զորս հնութին կամ խապառ եղծեաց, և կամ

թեանս էր՝ որ ծնանելոց էր, վասն այսորիկ և չարչարեալ զնա նշանակէ ։ Այսպէս Հայրն ։ Բայց դու թէ ասիցես՝ մարդ եղեալ ճշմարտապէս 'ի մարդկանէ՝ զբանն որ 'ի Հօրէ, ընդէ՞ր զանգիտես զմարդկայինն 'ի քո դաւանել բնութիւն . և աղաւաղիս 'ի բանս քո, և յայլմէ առ այլ փագեալ անցանես տարապարտ մտածութիւս ։ Երկնչի՞ս յերկուց ասել բնութեանց . երկիւղ մե՞ծ գոյ, եթէ ո՛չ (1) արժանապէս՝ և զմին ասել քո բնութիւն ։ Իսկ եթէ իրաւապէս և բարեպաշտաբար զերկոսին լսես, ո՛չ ինչ է արգել, զմին ասելով՝ յիշել և զառ 'ի յերկուցն . և դարձեալ՝ ո՛չ մոռանալով զերկուցն՝ խոստովանել և զմին ։ Զի և մեր Հարքն՝ բարեփառութեան հիմնացեալ հաւատով, աներկեան և անտարակարծ խոհականութեամբ՝ զէն անվթարելի զերկոսին զսոսա ընդ ինքեանս բարձեալ բերէին ըստ պիտոյից իրակութեան . զի մի ոք 'ի սոցանէ շարժեալ շողացուցանէին ընդդէմ թշնամեաց ճշմարտութեան ։ Առ այնոսիկ՝ որք ըստ Եւտիքեայ և կամ Յուլիանեայ չարապէս զմին իմացեալ ասէին, երկակի ասացուածով զբանիցն իւրեանց յօրինէին զառաջարկութիւն ։ քանզի իւրաքանչիւր ոք սոքա առ միմեանս բարեփառագունին առաջնորդեսցեն մտաց ։ 'Ի պտղոյ (2) անտի ծառն ճանաչի . և յար-

մա

յանկեան ուրեք պահէ 'ի Թագստեան . վասն ո՛չ ունիմք որոշակի նշանակել զաեղիս վկայութեանցն՝ ուստի առեալ եղեն ։

(1) Այս է՝ եթէ ո՛չ արժանապէս (խորհիս) զմին ասել քո բնութիւն ։

(2) Ղուկ . Զ . 44 ։

մատոյ անտի առի ծաղիկն ։ Հարցանես ըղ-
ծաղկէն, արմատոյն անուամբն նշանակես-
ցի․ եթէ անունն 'ի միջոյ բարձցի, ապա և
բանն․ և շարաբարձումն անուան և բանի
բարձցէ ընդ նմին և զնա՝ զորմէ ասեմն․ և
հարկ է կամ ստութէ և կամ այլոյ ասել
գոյացութե զիրն ։ Նու զիա՞րդ մարդ, և որդի
մարդոյ, և (1) անդրանիկ 'ի մէջ եղբարց
բազմաց․ և (2) ամենայնիւ նման մեզ՝ բայց
'ի մեղաց ։ Կամիս ծանօթանալ պտղոյն, չո-
րեւք այսոքիւք անստերիւրօղ խորհրդով
առ հմտութիւն իւրին վերաձգեալ ածցես․
անուամբ արմատոյն, տեսութ̃ գունոյն, 'ի
բուրմանէ անտի հոտոյն, և համոյն ճաշա-
կաւորութեամբ ։ Ըստ նմին օրինակի և առ
փրկչական մարմինն՝ վերաթեւեալ համբարձ-
ցես․ դաւանելով զնա տեսակին անուամբ՝
(3) մարդ յս̃ քս̃ ասելով ։ Ի տեսութենէ ան-
տի․ (4) շօշափեցէք զիս և տեսէք, զի ոգի
մարմին և ոսկերս ոչ ունի, որպէս զիս տե-
սանէք՝ զի ունիմ ։ Ի մարդկային կրիցն․ (5)
որով ինքն չարչարեցաւ՝ զփորձ առեալ՝ կա-
րօղ է և փորձանաւորացն օգնական լինել ։
Ի մահուանէ նորա վասն մեր․ (6) քս̃ մեռաւ
վասն մեր ըստ գրոց ։

Ապա ուրեմն՝ թէ և միովն ոչ զգաստացար,
առ այլոյն մի ըստ միոջէ ընթացեալ հարց-
ջիր․ և հաւանեցուսցեն զքեզ համագոյ
և համաբուն ասել զտ̃րունական մարմինն
մարդկային բնութեան ։ զի այսպէս յերկուց
բնութեանց խոստովանելով՝ նշանակեսցես զնա
մարդ

(1) Հռ․ ը․ 29 ։ (2) Եբր․ բ․ 17 ։ (3) ա․ Տիմ․ բ․ 5 ։
(4) Ղուկ․ իդ․ 39 ։ (5) Եբր․ բ․ 18․ (6) ա․ Կոր․ ժե․ 3 ։

մարդ. միանգամայն և ա̃ծ։ Իսկ մին ըստ բնութե̃ զնա ասացեալ՝ ո̃չ և ասէքդ իսկ, բացարձակ անունամբ. եթէ նշանակեալ լինի. զիա̃րդ կարասցես մարդ զնա եղեալ ասել՝ և մեռանել, և մահուամբ զանմահութե̃ն 'ի մեզ աշխարհացուցանել շնորհ։

Այորէկ (1) աղաղաւ՝ անպատկառացո̃յցք ո̃ք. հարքն երկուց բնութեց ք̃սի ա̃ծայնոյն և մարդկայնոյն լեալք, Բնութիւք երկու ասելով, վ̃ս զի ա̃ծ և մարդ (2)։ և եթէ՝ Ի միասին եկին բնութիւքն։ և եթէ՝ Հաւատի զերկոսին ունէր զբնութիւնս ք̃ս։ և եթէ՝ Արկին էր ք̃ս. մարդ էր՝ որ երևէր, և ա̃ծ էր՝ որ ոչն երևէր (3)։ և որ այլ ինչ սոյնպիսիք յայլոցն ասացեալ եղեն։ Ոչ եթէ զերկոցունցն ասելով՝ հրաժարէին ասել զմին, և կամ եթէ զորին հակառակն՝ ըզմին խոստովանելով՝ յամառէին յերկուցն (4) գո̃լ խոստովանութի. այլ համարձակաբար երկոքումբքս այսոքիւք բարեփառութե̃ զամպարոք փայլեալք պայծառանային, երկուս ըստ բնութե̃, և մի ըստ միաւորութե̃ զք̃ս քարոզելով։ ընդ ձեռն որոյ ցուցեալ

լի-

(1) Աչյորէկ. յօրինակին՝ այորէկ։ իսկ անպատկառացոյց բառս՝ 'ի կիր արկանի աստ յիմաստասիրէն 'ի վերայ հարցասէց, 'ի նշանակել զհամարձակ խոստովանութիւն նց. իսկ 'ի ձեռն ընդդէմ պօղիկեանց՝ 'ի ցուցանել զանամօթութիւն հերետիկոսաց։

(2) Գրիգոր ա̃ծաբան 'ի թղթ. ա̃. առ կղեդոնիոս որ է ծա̃. ձեռն ը̃ջն. և լտ. տպ։ և գլ. թ. յառօրսն։ իսկ հետևեալ համառօտն՝ է նորին գրիգորի 'ի ձեռն լա̃. ըստ յն. և լտ. տպ. կողոնիոյ. յեր. 497։

(3) Կիւրեղ եէմացի 'ի կոչ. ընծ, դ̃. տպ. հայ. յեր. 64։

(4) Գու. այսպէս յօրինակին. թերևս պարտ է լինել Գալ։

լինէր ոյն բանի բնութին անեղանելի՛ և ՚ի Հօրէ . իսկ մարմնոյ նորին գոյացութին ՚ի կուսէ և արարածական . ասելով . (1) Ոչ զուգապատիւս ասեմ զաւետարանչացն ձայնս , և ոչ ՚ի նոցունց արժանաւորութենէ ասացեալս . այլ՝ ոմն զբարձրութի աստուածութեն , և ոմն առ նուաստութի մարդկութես զիջանելն նշանակեն ։ եթէ՝ (2) Զարչարելի մարմնով , և անչարչարելի աստուածութին ։ Եւ համայն սա՝ որ այժմ անչարչարելի ասաց աստուածութեանն , յայլում տեղւոջ մակաձայնէ՝ (3) Ած չարչարեալ ։ Արդ՝ որպէս զասա իմասցուք . միթէ մարտնչիցի՞ ինքն ընդ իւր վարդապետս . քաւ լիցի . այլ զառաջինն ըստ բնութե տրամաբանէ , իսկ զերկրորդս ըստ միաւորութեն բանի ։ Ոչ յորժամ ըստ միաւորութեն ասէ՝ ուրանայ զհասարակականն , և ոչ դարձեալ ըստ հասարակականացն ինչ

ա-

(1) Առաջնկայ բանդ է գրիգորի նիւսացւոյ ՚ի ճառն զոր խօսեցաւ ՚ի ժողովն կոստանդնուպօլսի , այն է որ կայ հայերէն յառօրոն գրիգորի աստուածաբանի դլ . դ . և տպագրեալ է ՚ի բ . հատ . յն . և լտ . գործոց նիւսացւոյն ։ այլ առ իմաստ բանիցս ՚ի դէպ է յարել զբանս գրիգորի կաթողիկոսի ՚ի թուղթն ա . առ արևելեան վարդապետս՝ * Եւ արդ հաւատարմացաք (ասէ) ՚ի սրբոյ
• սրբանց , եթէ ՚ի բանս աստուածունչ գրոց անմիաբանու-
• թին ամենևին ոչ գտանի , և ոչ հատակոտոր ինչ՝ և
• դար՝ և կոճատ , այլ միաբան և միախորհուրդ ՚ի հոգ-
• ւոյն սյ խօսեցեալ և շարայարեալ և հիւսեալ առ
• միմեանս պեղեցիկ յարմարութբ , երբեմն ըստ ժա-
• մու պիտոյիցն ընդդէմ ներհակացն բաժանելով , և
• երբեմն ժողովելով . այլ երբեմն տալով զնուաստա-
• գոյնսն մարմնոյն , և զբարձրագոյնսն այ ։ Ոչ դթե-
• ցին ՚ի բաժանելն յատկութբ և կրիւք , և ոչ խոտե-
• ցան ՚ի միացուցանելն և ՚ի ժողովելն ։ ||

(2) Ածաբանն ՚ի թուղթն ա . առ կղեդոն″ ։

(3) Նոյնն , ՚ի ճառն ԼԷ . ը տպ . յն . և լտ ։ յառօրոն , դլուխ Է ։

ասացեալ բան՝ զմիութիւն յերկուս բաժա-
նէ միութիւնս. այլ՝ յերկոսին անչարաբա-
րոյական կամօք բարեպաշտել մերձենայ.
զչարչարելին ը̅ն հասարակականին՝ անչար-
չարելի 'ի միաւորութեն խոստովանելով. և
զանչարչարելին ըստ գոյացութե՝ բազմաչար-
չարելի ըստ միաւորութեն (1):

Նմանակի սմա և այլ ՚որ. հարքն զեւրեանցն
արձանագրեցին խոստովանական բան: Յոր-
ժամ ըստ բնութե ինչ բարբառել հասա-
նէր, համարձակապէս զերկաքանչիւրոցն
յիշէին զհասարակականսն. ոչ առ 'ի բա-
ժանել զմին որդի յերկուս որդիս, կամ յեր-
կուս դէմս, այլ միայն որոց էին ազգեալ
նշանակելին, ասելով միոյն բարողի.(2) Աս-
տակեաց յուղղութեն՝ մարմնով՝ և զղանցն
յուղեգնացութեն յաւէտ ձգեցելոյ. ոչ
ա̅ծութեն աշխատութը տաժանեալ, այլ՝
մարմնոյն որ 'ի բնութեն յարմարագոյն էր՝
զպատահումն ընկալեալ: Եւ որ այժմս ը̅
մարմնոյն բնութե զայս այսպէս մակձայնէ,
այլուր ըստ միաւորութեն առ բանն ա̅ծ զայ-
սոսիկ վերաբերէ՝ ասելով(3). Ես զԹաղումն
մարմնոյն և զգեստ նորա ասեմ բանին. ոչ
բնութը ա̅ծութեն, այլ միաւորութը մնո-
րէ-

(1) Նման այսմ գրէ և երանելին պրոկղ 'ի Ճառն ծննդ. որոյ սկիզբն է * Կուսական է տօնս, || յասելն * Բնութը անչարչարելին՝ եղև գԹութը բազմաչար-չարելի: ||

(2) 'Ի Ճառն դոհութե: Զայս վկայութի ընդարձակա-գոյն ևս բերէ սորև, տես անդ:

(3) Զայն զայս բերէ և վարդապետն խմաստասիրին Թէոդորոս՝ ը̅դէմ մայրապանեցւոյն՝ փոքր մի այլազգ, յասելն * Նախկին յոլովից գոլով հայր Ճշմարտանէր. անձանց ա̅ր բաղխելեաս կապադոկացի, ոչ 'ի վանդ-

ընութեն. սոյնպէս զձայնս զանձնականս, և զչարչարանս զանձնականս, զանօրէնութիւն և զզոփալն, ոչ բանին ասեմ, ոչ բնութե ածութեն, այլ միաւորութե անօրէնութեն:

Եւ այսպէս երկոքումբք այսոքիւք ուղղապաշտութե շաւղօք առ խորհուրդ մարմնաւորութե բանին վերերթալ գնացեալք որ. հարքն՝ համարձակեին և զընութեանցն արժանաւոր բարբառել բանս, և զմիաւորութե անօրէնութեն պատշաճագոյնս, ասելով. (1) Քաղցեալ ըստ մարմնոյն, ծարաւեալ, վաստակեալ, ննջեալ. և այնու ոչ եթէ զածութին ինչ թշնամանեաց, այլ վն զմարմնոյն բնութի ճշմարտութե յայտ առնելոյ: Եւ եթէ՝ (2) Անվիշտ և անմահ էր բանն որ յոյ հօրէ, յաղագս այնր իւրացոյց իւր մարմին՝ որ վշտանալն կարէ: Եւ եթէ՝ Ընդ իւրում ածութեն միացոյց զբնութիս մեր, և զամ ըստ բնութե մարդկութեն մերոյ առնէ և կատարէ միածին որդին

« ինչ ակամայից ճառեալ, այլ գեր 'ի վերոյ զաւոդէ
« կեցուցն եւթալ ասողլնարի կշտամբէր՝ որ կխա-
« մանութեն դաւանէր զանօրէնութե փրկական բա-
« նի. Եւ զչարչարանն ասէ՝ և զտրմութին (թերևս՝
« զանօրէնութե, կամ զտրտմութին,) և զզոփալն և
« որ ինչ միանգամ սոցին կցուրդ յաւետարանականն
« կայ՝ ոչ բանին ասեմ, և ոչ բնութեան ածութեն՝ այլ
« միաւորութեն:||

(1) Այս բան է սեւերիանոսի գաբաղացւոյն. զոր յաւելուածով բերէ և 'ի սորա, տես անդ:

(2) Կիւրեղ ալէքս՟ 'ի պնհտոսուեն Ժ առ տրաելեայս յլ. ժբ. նզովից, որ կայ տպագրեալ 'ի վախճան գրոցն պարապմանց. յեր. 490. ուր ասէ ✱ Անվիշտ և անմահ
« էր բանն որ յոյ հօրէ... և թէպէտ և այսպէս է
« բնութե բանն ոյ, իւրացոյց իւր մարմին ընդունելի՝
« որ վշտանալ սովոր է:||

դէն ոչ . այլ ըստ ածութե բնութեն (1) անխախտ և անկարծ , և լցուցիչ և կատարիչ ամ արարածոց :

Արդ այսպէս բաղմերջանիկ հարանցն անուրջաբար յիշել 'ի վերայ միոյ քոյ . ոչ առ 'ի բաժանել զմին քո յերկուս դէմս , կամ յերկուս որդիս . քաւ լիցի . այլ զառաւելագոյն աստուածամբութիւ առ ճշմարտութիւ հաւատոյն տնտեսել կամեցեալք . միանգամայն թէ և զչարափառայն տապաստ արկանել խումբս . որք ե՛ն ձեռն մին ասելոյն քոյ բնութեն՝ ուրանային զանսուտ նր մարդեղութեն խորհուրդ : Օ վերջինն եւտիքէս (2) , որ ոչ համագոյական կամին դժոխաբանէր զմարմինն քոյ , և մի բնութի : Օ առաջինն եւտիքէս , որ յերկնից և անստացական ասէր զմարմինն քոյ , և մի բնութի : Օ վաղենտինոս և զմանի (3) , որ կարծեւք առացին զերևումն քոյ , և մի բնութի : Օ ապո

(1) Անխախտ. Թերևս անախտ , ըստ որում պահանջէ և իմաստ բանին :

(2) Տես յերես 8 զծանօթութիւն յաղագս կրկին Եւտիքէսից :

(3) Զայս մոլորութիւն ընծայեն սոցա բազումք 'ի սրբոց հարց , և յայտնի իսկ երևի 'ի գրուածոց նոցա՝ որոց մնացորդք կան տպագրեալ 'ի մատենադարանն Փաբրիկեան . հատ . Է , յեր . 284 , և 285 : Օրինակի վա դնեցուք քանի մի հատուածս առ 'ի յայտնի ցուցանել թէ մոլորութիւն Եւտիքի և անգլուխ հեռևողաց նր՝ երաւամբք կցուածի յիմաստասիրէն և յայլոց՝ երբև զուգաձայն ամբարշտութեցն մանեայ և վաղենտինի : Արդ նա ինքն մանի 'ի թղթ . առ սեկլինաս , ասէ՝ * Մի է
* բնութիւն լուսոյ պարզ և ճշմարիտ , և մի ներգործութիւն նր . քան զի լոյսն 'ի խաւարի անդ լուսաւորէ և խաւար նմա ոչ եղև հասու : Զի ոչ յետութն մարմնոյ հուպ եղև , այլ 'ի նմանութն և 'ի ձև մարմնոյ տաղաւարեցաւ . որպ զի մի տիրեսցի յետու

պողինար և (1) զսափրոնիոս և զյուլիանէ , որ կիսաբաժ և ոչ կատարեալ զմարդ ասացին բնութիւն առեալ բանին 'ի կուսէն , և մի բնութիւն : Զեւտիքոս և զսևերոս , որ զաներևելի արարած ընդ երևելի արարածոյ շարակարգեալ ասաց զբանն ընդ մարմնոյն , և մի բնութիւն :

Ոչ հեռի 'ի սոցանէ և զքոյդ կարծեմ ասել մի բնութիւն . որ առ վտանգի խուսանգանաց՝ մարմնանալ ասես միայն բանի . և յորժամ՞ լինել մարմին , զայն ուրանաս . օրինակ իմն , որք զթագաւորական գահոյսն պատ-

ուոյ

• թէ անոր մարմնոյ , և չարչարեսցի և ապականեսցի՝
• յապականել անդ խաւարին զնորայն լուսաւոր ներ-
• գործութիւն : Արդ՝ զիարդ չարչարեցաւ՝ յորժամ
• ոչ չարութեան տիրեաց (նմա), և ոչ ներգործութեան նր
• խաւարեցաւ :|| Եւ յետ սակաւուց . * Պարզ բնու-
• թիւն ոչ մեռանի, և սուրէերն մարմնոյն ոչ խաչի :||
Նոյնն 'ի թուղթն առ սկիւթիանոս՝ (որ յայլոց վաղեն-
տինի ընծայի՝ ) ասէ . * Մշտնջենաւոր լուսոյն որդի
• զիւրական գոյացութիւն յայտնեաց 'ի լերին , ոչ զեր-
• կու ունելով բնութիւն , այլ զմի յերևելին և յանե-
• րևոյթն :|| Եւ 'ի թուղթն առ սոսո ( կամ սոսոս , և
կմ ըստ այլոց պոստոս ) այսպէս ծաղրէ ամբարիշտն
զուղղափառս յաւելն՝ * Յաւել գայթակղեցուցոց՝ թէ քս
• ունի զերկուս բնութիւնս , ծիծաղեսցուք զմոլորու-
• թիւք նց , զի ոչ գիտեն թէ գոյացութիւն լուսոյ ոչ
• խառնի ընդ այլում նիւթոյ , այլ է պարզ , և ոչ կա-
• րէ միանալ ընդ այլում գոյացութեան , թէպէտ և ե-
• րևեսցի բաղադրել :|| Բաղդատեա՛ զբան երկրորդն
ասացեալ եւտիքէսի յերես 19 , ուր և զպանդորոսին ,
և գտցես ոչ ինչ օտար 'ի բանիցն մանեայ :

(1) Սափրոնիոսդ յիշատակի և 'ի վախճան թղթոյն փոտայ որ առ զաքարիա կաթողիկոս , ընդ յուլիանեայ և ընդ պողինարի՝ ընդ չարաչար մի բնութեան ասողացն . այլ թէ փոտայ իցէ յաւելուածն այն յաղագս հերետիկոսաց 'ի վախճան թղթոյն՝ կամ թէ այլոյ ուրուք , չունիմք ինչ ասել : Յիշէ զսափրոնիոսն ընդ պողինարիսաց՝ և անանուն հայ հեղինակն հաւաքածոյ պատմութեան կմ ժամանակագրութեան կայսերաց , զորոյ զբանս

ուրոյ արժանի վարկանիցին լինել. և յորմէ գաւթոյքն գեղեցկակերտեցան՝ զնիւթն իբ-րև զանարգ ինչ անգոսնեալ 'ի բաց մղեն. ոչ գիտելով՝ թէ (1) յայնժամ պատուեալ երևի իրն, յորժամ առ համատեսակն իւր ասացի. զի թէ զկնի այնորիկ ոչ ասացի՝ յորմէ առեալն եղև, ոչ ծնանիցի առաւե-լութին՝ որում եհասն փառաց: Եւ դարձեալ թէ 'ի նորին վերայ էութեն ոչ հասցէ փա-ռացն մեծութիւն, ոչ ասի փառաւորեալ, այլ փոփոխեալ. քան զի այլ առ այլ ասի փառքն, և ոչ առ նոյն:

Արդ կամէք խոստովանեալ յառաջասացե-լոցն զքեզ մի ոք գոլ 'ի չարապաշտից, և ծանիցուք որ յայժմ ես մարդատեաց՝ զլա-նալով զքոյ մարդասիրութին. մ՞ զի նա առ-նլով յինքն մեծարեաց զմնութիս, և դու ոչ խոստովանելովդ վատթարես: Օ՞ն ևս ապա ընդ քեզ հարազատապէս մաքառես-ցուք, որ ախորժեսդ հեթանոսաբար առ 'ի մէնջ մեկուսանալ. և այն զի հրաման ըն-կալաք (2) զհեթանոսայն ոչ կոխել ճանա-պարհ, և 'ի քաղաքս սամարացւոց ոչ մտա-նել: Ապա թէ 'ի չարաչար արմատոց ան-տի ոչ ես չարագոյն ընձիւղեալ շառաւիղ, խոստովանեսցիս ընդ մեզ, մանաւանդ թէ ընդ հանուր (3) կաթողիկէ եկեղեցւոյ զմի և զնոյն ք՜ս՝ ա՜ծ միանգամայն և մարդ. զի

ծա-

եգաք 'ի ծանօթ. յերես 8: Ուր վրիպակ թուի գրչի գրելն Սոփրոնացի, փոխանակ գրելոյ սոփրոնացի:
Աւելք 'ի մատենագրաց չյիշեն զսոսա:

(1) Յայնժամ պատ՞. յօրինակին՝ յորժամ պատ՞:

(2) Մատթէոսի. Ժ. 5:

(3) Ընդ հանուր կաթողիկէ. յօրինակին՝ ընդ հան կաթողիկէ:

ծանիցի անբաժանելի և անշփոթ միութիւ մարմնացելոյ բանին այ : Ընդէր լինիս երբև զջուր հոսեալ ընդ զառ ՚ի վայր՝ անդրէն ոչ կարացեալ դառնալ . կամ երբև զկարկուտ հատեալ յամպոց՝ առ հալելն հուպ լինելով, քան թէ առ վերստին կալելն յամպս : Ընկալ առանց խարդախութե զդիմեցեալսն, և ճշմարտեա՛ զոր առ ՚ի փրկչէն կատարեցան իրագործութիւքն : Սա համարեսջիր լինել զբոյինդ ջաղջախս և սխալականդ խորհրդոց իմաստ, և մի զածայինն անսուտ գիր : Եթէ գրով գայթագղիցիս, գործոցն հաւատասցես . զի ապացոյցք բանի գործք ՚ի տնէն վկայեալ, [1] զինէ վասն գործոցն ասէ հաւատացէք :

Մի բաղդատեր զայդ ՚ի միմեանց տարբերեալսն . քանզի անդ անմարմնաբար և միայն ձևացութիւ ներգործութիւ . իսկ աստ մարմնով՝ և հանդերձ ճշմարտութիւ : Կերակրեցաւ առ աբրահամու [2] . Ճաշակեաց և ը̃ աշակերտսն [3] . անդ յանմարմնութե, և աստ ՚ի մարմնաւորութե . ուստի յայտ է՝ եթէ այն նմանութիւ գործոյ . իսկ այս՝ գործ ճշմարտութիւ : Եթէ զգործս առ գործն տարեալ հաւասարեսցես, հաւասարեալ լինին և երևմունքն՝ առաջինն և վերջինս : Նորին զհետ երթիցէ ծնունդն, աճումն, մահն, թաղումն, յարութիւնն, համբառնալն . ընդ որս ինքն անցանելով ըստ նմանութե գլխոյ՝ զբոլոր զառ ՚ի յեկեղեցւոյ զհետ հրաւիրեալ կոչէ զպատշաճեալ իւր անդամսն . և ամենայնքս մեր՝ ըստ քեզ՝

սուտէր

(1) Յովհ. Ժ. 38 : (2) Ծննդ. ԺԸ. 8 : (3) Գործ. Ժ. 41 :

տոնէր և երևութիւք առ 'ի յոյսն ակնկա-լութիւք ։ Աստուստ ապա և մանի և մար-կիան կենդանացին՝ զկնի այնքան ամաց՝ տեսանելով զքեզ իւրեանց եղեալ զարմ ։ Կորուսանես ասէ մարգարէն [1] զստութե խօսօղսն ․ եթէ կորուսանէ բանն , առաւել ևս գործն ընձեռէ կորուստ ։ [2] Աբրահամ հայր մեր ոչ ապաքէն 'ի գործոց արդարա-ցաւ՝ ասէ մեծն յակոբոս ․ ընդէ՞ր զատուն , և ոչ զհաւատս 'ի բանս և 'ի գործս առափոր-ձիս ցուցանել , կամելով լինել որդի անդ-րանիկ 'ի հօրէ սատանայէ [3] ։ Ի՞մ ջանաս փոփոխել զմակագրութ անուանն , և դնել զայլըմ ուրուք անուն [4] , յորմէ հեռի են ա-սացուածքն ․ և կմ թէ յեղանակել զբանն՝ ոչ ոք ինքն խնդրէ ։ [5] Մուտ զքեզ ներխոր-հրդութն բանի , և մի զխորհուրդ բանին առ-քեզ բռնադատեալ թիւրեսցես ։ Կայեա՛ այնոցիկ բանից , որոց մծն բան վկայեաց ընտրել ․ և մի զբոյդ արդարացուցաներ՝ 'ի բազմաց կրեալ [6] ազատանս և ապաքանուն ։

Ոու

(1) Սաղմ․ Ե․ 7 ։ (2) Յակ․ Բ․ 21 ։ (3) Յովհ․ Ը․ 44 ։

(4) Սովլին մեկն բանիւ լուծանի ամ տարակոյս , թէ զիա՞րդ թշնամիք սքանչելի հայրապետին՝ յաւուրց ան-տի նորա սկսեալ են հնարել եղծանել զանուն նորա ․ փոփոխութբ մակագրութե անուան , կմ ապաւաղելով զգրուածս ինչ նր , և կամ յօդելով բանս անյարմարս յանուն նորա ․ զորմէ քաջ գուշակութբ խօսեցաւ հե-ղինակն սրատմութե , միայն պակասէր նմա այս բանս իմաստասիրի , որով ապացուցաներ զեւր անսպառելի ձեռնարկութեն ։ Այսպիսի անցք անցին և Բ ոչ սա-կաւ գրուածս այլոց մեծամեծ վարդապետաց , զոր օրինակ ոսկեբերանի , հերոնիմոսի օգոստինոսի , ևն․ ոչ յայտ է բանագիտաց ։

(5) Մ[illegible] ․ այսպէս յօրինակին , թերևս պարտ է լի-նել [illegible] ։

(6) Ս[illegible] ․ այսպէս յօրինակին ։

Ծանի՛ր , զի՞ ոք 'ի նոցանէ ըստ բնութե՟ է ա-
սացեալ . և ո՞յք այնոքիկ իցեն՝ որ ըն՟դ միաւո-
րութե՟ն տրամաբանեցան ։ Եւ այսպէս լու-
սաւորագոյնք իմացուածովք կարասցես 'ի
միտ առնուլ զերկաքանչիւրոն գրեցելոցն
բանից խոհականութի՟ս ։ Քանզի բազում
ինչ անյայտութի՟ և տարակուսանք յաւե-
տարանականն գտանի ձայնս և յառաքե-
լականս . առ որ եթէ խաւարազգած ոք 'ի
ներքս յառեալ նայիցի հոգւոյն ակամբ ,
նոյն ինքն՝ մոլորութե՟ պատճառ՝ ճշմարտու-
թե՟ն նմա եղանի ասացուած ։ Որպէս յիմա-
րամիտն այն ապօղինար՝ լսելով յառաքե-
լոյ [1] , որովհետև մանկունք հաղորդեցին
արեան և մարմնոյ , և ինքն իսկ մերձաւո-
րութե՟ կցորդ եղև նոցունց , աստուստ ա-
պա զմարդկայինն 'ի բաց կրճատեալ եհան
'ի մարմնոյն ք՟ի զբանական հոգին , ասե-
լով . ա՟ծայինն էր հոգիացեալ հոգևորութե՟ ։
Նոյնպէս և այլով իւիք բանիւ այլ ոք վրի-
պեալ մոլորեցաւ , յասել անդ փրկչին [2] .
ոչ ոք ել յերկինս , եթէ ոչ որ էջն [3] յերկ-
նից որդի մարդոյ՝ որ էն յերկինս . կարծեաց
եւտիքէս առաջին յերկնից բերեալ , և յա՟ծ-
ային բնութե՟ն հայթհայթեալ ք՟ի մար-
մին , և իբրև ընդ խողովակ զնոյն անցուց-
եալ ընդ մէջ կուսին . ոչ իմանալով՝ թէ [4]
յաղագս առ երկնային միաւորութեանն՝

որ

(1) Եբր . Բ . 14 ։ (2) Յովհ . Գ . 13 ։
(3) Եթէ ոչ որ էջն . յօրինակին՝ էթէ ոչ էջն ։
(4) Գրիգոր ա՟ծաբ". 'ի թղթ . Ա . առ կղեդոն . * Ոչ ոք
, ել 'ի յերկինս՝ եթէ ոչ որ էջն յերկնէ որդին մար-
, դոյ ։ Եւ եթէ այլ ինչ նոյնպիսի՝ իմանալի է աս-
, ցեալն յաղագս առ երկնաւորն միաւորութե՟ ։||

որ յերկրէն էր՝ ասէր այսպէս․ Որդ․ է ուրեմն յամենայն գրեցեալն բան՝ որ ըստ բնութեան է ասացեալ և իմանի, և է որ ըստ միաւորութեան տնօրէնութեանն։ Օ ի յորժամ ասէր փրկիչն ցփիլիպոս, (1) որ ետես (2) զիս՝ ետես զՀայր իմ, եթէ զտեսանելս զայս՝ առ բնութեան տեսութիւն, զոր ումեք ոչ դի զՀօր, ոչ առաջնորդեսցես միայն աչաց, ոչ միայն թէ (3) որդեհայրութիւն 'ի ներքս ածեալ մուծանես, այլ և մարմնի եւս Հօր չարչարեսցես՝ որպէս և որդւոյ։ Բայց նմին և յորժամ ասէր, թէ (4) ես և Հայր իմ մի եմք, ոչ ըստ դիմաց և առանձնաւորութե զմին ասէր գոլ, այլ ըստ բնութե։ Ուր որ դու կուրացեալ միտք հայելով՝ ոչ գիտացեր զանազանել, այլ մեղադիր եղեալ առաջնոցն ամխոսութե՝ գրեցեր և ասացեր, թէ զի՞նչ պարտ է զճարտարան յունաց համարել, որք ասեն զերրորդութիւն դիմօք և առանձնաւորութե՞ բաժանեալս, և ամուե՞ միաւորեալ։ Աստի յայտ արարեր, թէ դու և ոչ զմի յերկոցունց յայտնցանէ ոչ ընդունիս. և այդպէս՝ ոչ բաժանելով ըստ դիմաց՝ լինիս սաբեղացի, և ոչ միաւորելով ըստ բնութե՝ արիոսեան։

Նու

(1) Յովհաննու. ժդ. 9։
(2) Որ ետես զիս՝ ետես. յօրինակին պակասի՝ զիս։
(3) Աթանաս 'ի բանն յաղագս երրորդութե՝ (որ կայ և 'ի յն. լա. գործս նորա հատ. ա. յեր. 79.) գրէ
* Վա զի և ոչ որդեհայրութե խոստովանիմք՝ որպէս
* սաբէղեանոսք, որք ասենն միանձնական այլ ոչ հա-
* մաբնական. Ուր բառդ որդեհայրութե եդեալ է 'ի
Թարգմանութե յունական բառիս υἱοπάτορα [illegible]
—, որ զնոյն նշանակէ։
(4) Յովհ. Ժ. 30։

Նաեւ եթէ ոչ բաժանի ըստ գլխոց , զիա՞րդ առանձնաւորութիւնքն կարեն անշարժ մնալ . զոր մեծն գրիգոր սուրբ նազիանզու [1] , եթէ՝ Ս երիս գոյութիւնս ոչ միոյ իմանալ ծագում-ման , կամ լուծանելոյ 'ի միմեանս , և կամ խառնակութեան : Նաեւ դարձեալ՝ Եթէ ոչ ամբո-թիւն միաւորես , օտար ասպէքն 'ի ներքս ածես բնութիւ , և յանհաւասարս զզուգա-հաւասարն դնես [2] գոյացութիւ :

Արդ այսպէս ընդ խաւար զճշմարտագոյնն շօշափեցեր լոյս . և զկուրութիւ մտաց քոց զբերովքն արկանես հարամբք , զորս ճար-տարս յունաց անուանեցեր . և զայս 'ի քեզ հայելով ասացեալ , զի թէ դու 'ի գիտու-եւր եղեալ , զայլս ոչ անուանէիր գիտունս : Իսկ մինչ ճարտարս զնոսա խոստովանեցեր , զառ 'ի նոցունց իմաստաբար ասացեալսն ընդէր ոչ ընդունիցիս : Բայց լիցին ո՞վ արդեւք ճարտարքն այն յունաց , հարցանեմ զքեզ՝ թէ զճշմարիտն ասասցես . զի թէ և դու կամիցիս ստել , ամբաստանականն քո բան՝ որ զնոցանէն՝ յանուանէ մեզ զասացօղս բա-նիցդ այդոցիկ ցուցանէ :

Ասացեր , թէ գլխոք և առանձնաւորութեամբ բաժանեն , և ամբողջութեամբ միաւորեն [3] : Այո 'ի մէջ հարանցն ասացեալ եղև . Ո՞չ ծանօ-թու

(1) 'Ի ճառն . ԽԳ . ըստ տպ . ՅՆ . և ԼԴ : Գլ . Է . յառա-ջաբանն . ուր բառս փոյզոպոն եդեալ է փոխանակ անձ-նաւորութեան՝ զոր յատկապէս նշանակէ յոյն բառն է-բօստասիս , որով վարի ամբարանն :
(2) Նոյնպէս և սոյն բառս փոյզոզոն , դնի նովին նշա-նակութեամբ էբօստասիսի :
(3) Ըստ որում գրէ աթանաս 'ի ճառն ՅԳ . երրորդու-թեան . 'ի ճառընտ . * Զառանձնաւորութիւն որոշեմք , իսկ զամբողջութիւն միաւորեմք :|| զնոյն ասեն և այլ հարք :

Թուլթիքն յիւրաքանչիւր ումեքէ բարձեալ լինի, և ոչ առանձնաւորական նմանութիւնքն յայլում ումեք երևեալ: Եւ եթէ՝ (1) Իսաժանի անքաժանաբար, և միաւորի որոշմամբ. և ոչ զմիաւորութիւն խառնակութե գործելով, և ոչ զբաժանումն օտարութե: Եւ եթէ՝ Պարտ է՝ զմի ածութիւն պաշտել, և զերիս դէմսն խոստովանել և կամ զերիս (2) գոյացութիւնս. և զիւրաքանչիւրաք համդերձ յատկութբ: Եւ եթէ՝ (3) Ոչ անգոյք են անուանքն, կամ միոյ դիմաց. մինչ զի լինել շփոթութիւն մեր անուանմբք, այլ ոչ իրօք:

Այս են երջանիկ հարանցն ածաբանական դաւանութիւքն. որովք բանիւք դու հերձուածողս առասես զնա, և ոչ զանդրանես և զարհուրիս՝ զթուենալից որպէս զօձի զլեզուդ քո շարժել ընդդէմ նոցա, որք աբանեակք և սպասաւորք եղեն բանին այ. անյողդողդելի հաւատով զնորայն հիմնացուցին զեկեղեցի: Եւ զի՞նչ զարմանք են յածագանիցն ոչ պատկառել քեզ արանց. զի և առ նոյն ինքն մեծագոյն բնութիւնն անամօթեցար զհայհոյութեանդ քո ձգել բան, ոչ խոստովանելով՝ ի միում անեղ բընութե զերիս դէմսն և զերիս առանձնաւո

(1) Գրիգոր ածաբան ՚ի ճառն յայտնութեան, որոյ սկիզբն է. *Դարձեալ իմ յն:|| որ և է բառ կարգի յն. և լտ. տպ. ճառ. լթ:

(2) Նոյնն յառորին դլ. ը: ՚ի տպ. յն. և լտ. ճառ. իթ: ուր արժան է գիտել, զի ը դրելոյ մեր ՚ի վեր անդր. բառս [illegible]. եդեալ է ՚ի թարգմանութե բառին [illegible]. ոչ ընթեռնու իմաստասէրն յօրինակի իւրում. ուր ՚ի մեր օրինակն գրոց ածաբանի գրի [illegible]:

(3) Նոյնն յառորին. դլ. ժը: տպ. յն. և լտ. ճառ. ժը:

ւորութ̃եանն , զՀայր և զՈրդի և զՍբ. Հոգի : Ընդ ձեռն որոյ 'ի բաց բառնալով զպատճառն՝ որով խելք միմեանց են և ասեն , ընդնմին բարձեալ լինի և իւրաքանչիւր ուրուք նոցա գոյութ̃ին . ընդ որով ապա և ոչ ա̃ծ . և մնալ քեզ անա̃ծ , որ այդպէս յանդուգնդ ես յա̃ծտեսութ̃իս , որ իմաստասիրեսդ և ասես , թէ որ 'ի Հօրէ անձնն էր՝ նոյն անձնաւորեցաւ 'ի Սբ. կուսէն :

Յորժամ ընդ Հօր զնա ա̃ծաբանէիրն , ո՛չ ճորՀեցեր նմա զկատարելութ̃ի ունել դիմի . իսկ այժմ երկուցեալ՝ թէ մի գուցէ խոստովանել Հացցէ 'ի կուսէն , այսինքն 'ի մարդկային բնութ̃էս զկատարելագոյնն տալ նմա գոյութ̃ի մարդեղութ̃ե , անձն 'ի Հօրէ զնա անուանեցեր : Իսկ մինչ անձն ասես , ընդէ՞ր Հրաժարես զնա դէմ ասել . եթէ արդեւք վարդապետեցար 'ի քում արուեստարանիդ՝ ա՛յլ գոլ անձն , և ա՛յլ ըդդէմն . որ թէպէտ և է՛ ուրեք՝ որ զանազանի 'ի զանազան տեսակս , սակայն առ մի և նոյն առեալ իրակութ̃ի՝ զնոյն երկոքին ակնարկեսցեն : Վասնզի զամենեմնէ ասի թէ՛ անձն և եթէ դէմ . և այս Հասարակաբար զՀետ երթիցէ մարմնական և անմարմին տեսակացն . քանզի իւրաքանչիւր առանձնաւորեալքն 'ի տեսակին՝ դէմ անուանի . որպէս 'ի մարդկանէ (1) պօղոս յատկացեալ դէմ առկոչի . իսկ յանմարմնոցն գաբ-

(1) Պօղոս . յօրինակին՝ պօղոս . յառաջին վանկն շեշտելով , ով ունին սովորութ̃ի գրել և Հին գրչագիր օրինակք ա̃ծաշնչի . ոչ զայս բառ ևեթ՝ այլև զայլ յատուկ անուանս ըստ յունաց , գրելով պետրոս , բարնաբաս , յովհաննէս , յակովբոս , են :

դաբրիէլ առանձնացեալ դէմ անուանի ․ սակայն յանեղագոյն էութէն՝ հայր կ՚որ-դի կամ հոգի առանձնակի յիշեալ դէմ առասի ։ Եւ (1) արտորոշեալ ձայնաչի 'ի նո-սա դէմս այսուիկ ․ հօր ծնօղ գոլ ․ որդւոյ ծնունդ ․ իսկ հոգւոյ ելումն ։ Եւ նոյն սա է առանձնաւորութիւն ․ զի որով իւիք նշա-նակեսցի դէմս, նոյն և առանձնաւորու-թիւն նմին եղիցի ։

Արդ զի՞արդ դու մոլորեցար՝ կամ ոչ իսկ ասել դէմ և առանձնաւորութի երեքանձ-նական զօրութեն, և կամ թէ ասել՝ չարա-չար ասել՝ ընդ լիբէացւոյն ելանել սուր ․ փոխանակ երից դիմաց և առանձնաւորու-թե՝ մի ասել դէմ և առանձնաւորութի ։ Եւ համայն հիացեալ եմ մեծապէս՝ զնո-րանշանդ 'ի քեզ տեսանելով ձևացուն ․ զի այլք յաճեկանացն զմի մի ինչ 'ի սատանայա-կան ուսմանցն բարձեալ տարան շահս ․ իսկ դու յոյժ ագահելով՝ և ոչ զմի ոք ան-տուստ 'ի կողմանէ թողլով տենչացար ․ մինչ թէ զնոյն զմարգարէին առ քեզ բարբա-ռել իրաւացի է ․ (2) ամբարձ զաչս քո յուղ-ղութիւն, և տես, ուր ոչ թաթաւեցար 'ի ձանապարհս քո ․ և որ 'ի կարգին ․ առ ա-մենեսեան առ անամօթեալդ, և 'ի խոստո-վանականս, և 'ի կարգս, և՛ 'ի կրօնս, ա-ռանց ամենեցուն հոլանեալ, և զամենե-ցուն 'ի տեղի արարեալ լցեր զհայհոյու-թեանն չափ ։

Պայ (3) հնար թուէլ զխիձս հեղեղատի, և զա-

(1) Արտորոշեալ ․ յօրինակին ․ արտորոշեալ ։
(2) Երեմ ․ գ ․ 2 ։ (3) Սիրաք ․ ա ․ 2 ։

զաւազ ծովու, և զշիթս անձրևի, և ոչ զըս-տեղծեալն առ 'ի քէն նորագիւտ բանս և-լոս : Ընդ հակառակս ելանել ա̃ծայնոյն խորհեցար գրոց · (1) լցցի ասէ երկիր գիտու-թ̃բ տ̃ն իբրև զջուրս բազումս՝ որ ծածկեն զծովս · այսպանակ և դու հրապուրականդ քո բանիւք ծովացուցեր : ա̃մ օր՝ և ժամ՝ և ամիս՝ քեզ նորաձևութեան : Ո՞ւր տար-ցուք զառ 'ի քէն հասեալ 'ի մեզ աղէտս · (2) ո՞ւմ պատմեսցուք զչարիս, կամ ո՞ւմ գոյժ-տասցուք զանջատելոյդ 'ի կաթանէ, զհա-ուցելոյդ 'ի ստենէ · (3) որ եդիր յերկինս զբերան քո, և զլեզու քո ածես զերկրաւ · (4) որ ջանասդ մերժել 'ի մէնջ զօրէնս ա̃յ մերոյ, և պատմել մեզ փոխանակ այնոցիկ այլ մոլորութ̃ · որ (5) իբրև զձի ընդ քերան մտեալ՝ ոչ կասիս յընթացից քոց · (6) և ոչ ասացեր՝ թէ արդ հանգեայց · զի զայն առ-ուժի գործէիր : Որ յոյժ պինդդ ունիս զմիտ-ասել բնութ̃ · և ասելոյդ քո խորհուրդ 'ի վաղենտինեայցն և 'ի մանիքեցւոցն հայի աղձատանս : Իսկ զառ 'ի յերկուց բնուեցն ասել՝ ոչ միայն թէ լսել ոչ կարասցես, այլ և վատթարագունի իմն նմանեցուցանես տարացուցի · որ է ըստ քում ա̃ծխօսութեդ. և տարացոյց քո : Նա յաղագս այդր երկու-զի, թէ մի գուցէ զփրկչական մարմինն 'ի մարդկայնոյս ասել (7) հարկեցցիս բնութ̃է, 'ի համուր իսկ էակացս 'ի բաց բարձեալ տա-րար զանուն բնութ̃ե, ասելով · ոչ ասի այլ բնու-

(1) Եսայ. ժա. 9 : (2) Ընդ. լե. 9 : (3) Սաղմ. հէ. 9 :
(4) Եսայ. Է. 11. 10 : (5) Եր. Ը. 6 : (6) Եսայ. ծէ. 10 :
(7) Հարկեցելոյ բնութէ · յօրինակին · հարկեցելի բնութէ :

բնութի , բայց (1) արարչականն ևեթ . և ամքս 'ի նմանէ ածանցեալք՝ զնա ունին միայն իւրեանց բնութիւն ։ Որպէս զի ըստ քեզ՝ յերկուց մին պատկանեսցի . կամ զարարիչն թուել ընդ արարածս , որ է անածութի , և կամ զածութե կարծիս բերել 'ի վերայ արարածոյս , որ է բազմածութի . և նոյնպէս երկոքին անածութի ։ Այս է քո պանծալի ածաբանութիդ , մանաւանդ թէ յիմարութեդ ցոյցք , զնիւթս զայս յաւէժակից ասել արարչական զօրութեանն . բնութի , և ոչ ստացուած նմա զսա համբաւել ։

Եւ սակայն (2) լիրբ և չար լինելով՝ զամպարշտութեդ ոչ գիտացեր զյագուրդ . որպէս ասէ մարգարէն ։ Յորժամ տեսանես զմարդկային ինչ ուրուք ճառեալ գքնի կրրիցն , յանդգնիս աներկիւղաբար 'ի դրեցելոց անտի՝ որ զայնն քարոզէ՝ 'ի բաց ջնջել զբանն (3) և ասես՝ որոմնացան մշակացն է զայդ

(1) Զայս ձախողակի կարծիս , կշտամբեն յեւտիքականս՝ Է իմաստասիրին մերոյ և ոմանք յերևելի ածաբանից , բերելով առ այս զբանս տիմոթէոսի աղեքսանդրացւոյ՝ կուզն անուանելոյ , որ * զածութին ևեթ * (ասէ) լինել բնութիւն քնի ։|| Յայտ է թէ 'ի նոյն հայլն և բանք հակառակորդին սոտ , և յեր . 17 , զորս և հերքէ իմաստասէրս ։

(2) Եսայ . ծզ . 11 ։

(3) Սովին իմաստիւք խօսի և վարդապետն իմաստասէրին թէոդորոս ընդդէմ մայրագոմեցւոյ՝ յասելն , * Արդ՝ չարահաւեալ զխորհուրդս իւրեանց սկզբնա * կանին մատենագրել այսպէս . . . յայտ է ասեն , թէ * անընդունակ է առաջ(ին) թարգմանութիւն աւե * տարանին , որ յաղօթականութեն զհաջքրտնութին * պատմէն ամենակարողի բանին այ , և զի հրըշտա * կէն քաջալերեն ։||

զայդ սերմանեալ ։ Որ ոչ միայն է անհաւա-
նական՝ զոր ասեսդ, այլ և անհաւատալի ։
Յորժամ չար մշակքն 'ի վերայ բարի սեր-
մանն որոմնացուք լինել հանդիմանայլն,
ամենեքին առհասարակ եկեղեցականացն
'ի բաց բարձեալ եղեն հոգաբարձուք․ ան-
տէրունչ 'ի քնոյ առ 'ի հաւաքեալ զաւիթ-
շրջելին հօտից բազմութի․ ոչ որք տեսա-
նէր, և ոչ այն որ լսէր ։ Արդ եթէ էին ո-
մանք, այլ և այլովք ևս կենդանիք մնաց-
եալք, զիարդ էր՝ եթէ զթիւրութեն արտա-
հալած առնելով զաւանդիչս, զիւրեանցն
'ի ձեռս նոցա տայլին առ 'ի թիւրել զուղ-
ղափառութի ։

Եւ կամ զորս 'ի մէնջից աստի հոգլին որ-
զարթոյց՝ լինել զկնի առաջնոյն լուսաւո-
րիչք․ զերկոսին զնա ասեմ սրբս՝ զՍահակ և
զՄաշդոց․ և զամենեսին զընտրեալսն զար-
բանեակս նոցուն և զգործակիցս, զերկնակ
և զայլսն․ և կամ որ ըստ նոցանէ, և ոչ
հեռի 'ի նոցանէ․ զմեծն իմաստասիրաց և
զհռչակեալն ը տիեզերս զՏր Մովսէս․ որք
էին միանգամայն արուեստաւորք թարգ-
մանիչք և ուղղափառք ։ Նոքա և այնքան
ոչ կարացին ճանաչել զօտարոտի խառն-
ուածն, փոխանակ անխարդախ կաթինն
հրապոյրս պղտորս (1) իւրեանցայոցս արբու-
ցին համազանց․ վարձկանք և ոչ հովիւք լի-
նելով՝ անփոյթ արարին զոչխարացն ։ (2) Ի
ձեռն հնչեաց բանն Տն, և առ ձեռն միայն է-
հաս աւետարանն ։ (3) Գոյք ուրեմն հովիւն
քաջ

(1) Իւրեանցայոցս․ յօրինակին․ Իւրեանց յոյս ։
(2) Ա․ Կոր․ Ժա․ 36 ։ (3) Յովհ․ Ժ․ 11․ 8 ։

քաջ 'ի քնէ̃ զինքն ատացեալն․ (1) ամենեւ-
եան՝ որ յառաջ քան զձեզն էին՝ գո՞լք էին
և ասացեալք ։ Իսկ (2) ասէք․ ա̃ծսիրութեան
միանգամայն և ուսումնասիրութե̃ ըմբռ-
նեալ ցանկութբ̃, որոց և հանդիպել կա-
րացին գրեցելոց՝ Թարգմանեցին և բերին ։
Ո՞րնչ ասէք․ ա̃ծասէրք լինելով՝ ա̃ծատե-
ցութեա՞ն յանդգնէին ցուցանել գործ․ և
յուսումնասիրութե̃ մնալ կանխեալք՝ ե-
րանելին առ յիմարութի̃ն, (3) զզարմ̃ քաղցր
վարկանելով, և դնելով զխաւարն իբրև
զլո̃յս․ զչարն ընդ բարւո̃յ փոխանակել, և
բառնալ բերել զմարգարէականն 'ի գը-
լուխս իւրեանց վայասացութիւն ։
Որպէս (4) զմոռոխ զմոռուք պատէք, որ-
պէս ասէրն յովբ․ և (5) դնելով զստութի 'ի
յոյսն ձեր՝ ընդ ստութբ̃ և մտեալ ծածկիք
ը̃ն եսայեայ բանին ։ Լսես քաղցնուլ գրեալ
յաւետարանսն զյս̃, և զուղիս այնուհետև
'ի շատախօսութե̃ն հոսանս՝ ասելով․ Որպէս
վայել

(1) Դարձեալ 'ի սոյն ձև բանից հայի և ասացեալն 'ի Թէոդորոսէ ընդդէմ մայրագոմեցւոյն ։ * Արդ դու-
» ո̃վ յօդաբան և զրուցահօր՝ իբր գերաթուեար մե-
» տացաթև համեմատ քան զերկինաղղակ նախա-
» հարսն, որք հիմունք եկեղեցւոյ և խարիսխք ճշմար-
» տութե̃ անուանեցան․ որոց պահապանք հրեշտակք․
» և զօրավար՝ ինքն ա̃րն․ որք վկայեալք յաղագս քնի
» նահատակեալք գլխափառեցան յաւաքելական առ-
» տիճանին․․․ և այսքան ժամանակք ('ի չարչարանաց
» անտի քնի՛) յանդիմանութեա՞ն գնացին բոլոր մա-
» կունք եկեղեցւոյ, և միայն արդ եւս 'ի վախճան ժա-
» մանակաց նորուսք դուք և նորածանք գտայք ճշմար-
» տութե̃ն, երկրորդ առօղինարխոք, որ նորաձայն-
» աւանդութե̃ք նորածին բուսուցէք արմատոց դա-
» նութե̃ փուշս՝ հրաճարակ անշիջանողը բոցոյն ։ ||
(2) Աշ․․․ յօրինակին․ ․․․ ։
(3) Եսայ․ Ե․ 20 ։ (4) Յովբ․ ԺԵ․ 12 ։ (5) Եսայ․ ԻԸ․ 15 ։

վայելէ ո՛չ քաղցնուլ . զքաղցն իմանամ,
և ո՛չ մարդկայնովս օրինակեալ ներքսա-
կեմ զնորայն . զմարդուսն (1) քաղցնուլն զա-
պականուի ներգործէ , և նոյն ինքն քաղցն
ո՛չ այլ ինչ , եթէ ոչ ապականուի : Այլ ես
նախկին , զի և ո՛չ իւիք գիտեմ զմծայինն
հարկաւորագունիցն ներգոյ անկեալ բնու-
թե . զի թէ այս էր , հա՛րկ էր և մարմին ա-
սել գոլ զպարզն և զանմարմին զօրութին :
Եւ սուտ լինի ըստ ձեզ՝ 'ի կնոջէ և մարդ-
զնա լինել գրեալն . այլ զնոքեանն բերեալ
երևեցոյց մեզ յերկնից մարմին : Ընդ ձեռն
որոյ երթեալ հանդիպիս՝ զոր միշտն խընդ-
րես , եւտիքեայ առասպելականին . օրի-
նակ իմն , մանուկ մոլորեալ՝ ուրանօր և եր-
թիցէ , զմայրն վերաձայնեալ կարդայ :
Պարզեալ՝ զի և որ 'ի մեզ բնաւորականքն
են՝ հոգեկանք և մարմնականք , ո՛չ են ա-
պականիչք և կամ ապականութի բնութես
մերում : Քանզի ապականութի ներլինե-
լութեն ներհակմնայ . և ներհակքն ո՛չ կա-
րեն համանգամայն 'ի միում և 'ի նոյն ժա-
մանակի բաղկանալ . իսկ քաղց և ծարաւ և
աշխատութի և տրտմութի և հոգք և եր-
կիւղ և ցասումն , ես և անգիտութի , և որ
սոցին նմանք՝ համանգամայն ընդ լինելու-
թեն բանին (2) առեալ լինի մարդուսն . ա-

պա

(1) Զմարդուսն քաղցնուլն զապականութի ներգործէ . Թուի լինել աստ վրիպակ գրչի , զոր և մարթ է ուղղագրել այսպէս . Զի մարդոյս քաղցնուլն զապականութիւն ներգործէ : Իսկ յետագայ նոր հատուածն որ սկսանի Այլ ես նախկին , է տակաւին բան հակառակորդին :

(2) Եթէ չիցէ 'ի բանս վրիպակ ինչ գրչի , մարթ է այսպէս պարզել զբանդ . Բնաւորական կիրք 'ի մարդն,

պա ուրեմն և ո՛չ են այսօրինակ ապականունք ․ զի եթէ էր ապականութիւն , ո՛չ կարէր 'ի միասին ՚ը գոլոյն բաղկանալ ․ այլ են բաղկացականք գոյացութե ։

Քանզի ասէր գոյացուցիչն մերում Նախահօրն ․ (1) յոմ ծառոց՝ որ են 'ի դրախտին , ուտելով կերիցես ․ այս ո՛չ ապաքէն ՚ըստ բնութեն պատշաճեալ կերակրողականին առաջի դնէր զպէտս ․ զի եթէ ո՛չ այս այսպէս , աւելորդ վարկանիմ զամենապատուղն զայն տնկագործողին տնկեալ զդրախտն , և 'ի նմա դնելով զմարդն՝ հրամայեալ անդուստ վայելել նմա ։ Իսկ դարձեալ թէ՝ (2) 'ի պտղոյ ծառոյն՝ որ 'ի մէջ դրախտին , մի՛ ուտիցես , զի մի՛ մեռանիցիս ։ Եթէ ոչ երկիւղին տրամադրութիւն 'ի բանականումն նր բնաւորեալ էր յոգւոջ , զիա՞րդ զգուշացուցանէր , և կամ զգուշացեալ լինէր , և կամ մեղադրելի յետ ոչն զգուշանալոյ ։ Իսկ յառաջ քան զայս գրեալ է , (3) գործել զնա , և պահել զփափկականն զայն դրախտ՝ զոր տնկեացն ։ Առաջինն զաշխատութիւն , և երկրորդն զհոգալն ըստ ինքեան շարամանեալ ունի ։ Իսկ զքնոյն ունակութի (4) բացայայտակի 'ի գրեցելոց անտի բանից ծանեաք ․ (5) Էարկ աստ ա̄ծ թմբրութի 'ի վերայ ադամայ , և ննջեաց ․ ոչ արտաքուստ 'ի նմա բերելով զքնոյն խրակութի , այլ

բնա֊

որպիսի են քաղց , ծարաւ , աշխատութիւն , համանգամայն ընդ լինելութեն ( ի յառեղծանելն ) բանականին՝ առեալ լինի 'ի մարդումն ։

(1) Ծննդ․ Բ․ 16 ։ (2) Անդ․ Գ․ 3 ։ (3) Անդ․ Բ․ 15 ։
(4) Բացայայտակի․ յօրինակին․ Բացայայտակի ։
(5) Ծննդ․ Բ․ 21 ։

բնաւորականին ըստ ախտոյիցն 'ի վերայ ան-
կեալ կրից։ Իսկ զցանկութիւն յորոց ցանկա-
ցան հրաժարեցուցեալն պողոյ՝ իմանամ։
Եւ զոր ասէն, (1) ադամայ ոչ գտաւ օգնա-
կան նմա, այսո՞ւիկ զորտմութի նշանակէ
զնախաստեղծին, զայլս 'ի կենդանեացն
զուգակենակցաբար ՟ը ազգի տեսանելով
վայելչացեալս, յաղագս նորին տրտմէր ընդ-
իւրն միայն անտոյն ամայութի և զրկանս։
Այլ և զյառաջխաղութիւն ոչ ըստ բնութե
'ի նմա ասեմ գոլ նախատեսութիւն, այլ
յածայլն հոգւոյն ազդմանէ, որ երբեմն
շարժէ, և երբեմն առ ինքն ամփոփեալ՝
թողացուցանէ զմտաւոր և զբանական հո-
գին. զի այսպէս ոչ ոք յարարելոց աստի ար-
ժանացաւ հասանել գոյից. միայն արարչա-
կանին այս հետևեսցի. որպէս և ինքն ե-
սայեաւ ասէ. (2) չիք այլ ոք բայց 'ի յինէն,
որ գիտիցէ զվերջինսն՝ մինչև եղեալ իցեն,
և միանգամայն կատարեսցին։
Որդ՝ յայտ է, եթէ ըստ բնութե և նախ
քան զյանցանելն այսոքիկ, և ոչ յետա-
մտականաբար 'ի մեղացն 'ի ներքս անկեալ
'ի բնութիս. որպէս և քեզ թուեցաւ ասել։
Բայց վասն զի մի և նոյն անձնիշխանութի
առաջնորդականին՝ յերկուս կողմանս հա-
կամիտեսցի յարձակմամբ ցանկութեն, եր-
կատեսակ իմն սոցայն կարծեսցի գոլ տրա-
մադրութի. որ մին հոգւոյն անուանի, և
միւսն մեղաց։ (3) Օրէնք հոգւոյն կենացա-
զատեցին զիս յօրինաց մեղաց և մահու՝ պղ-

զոս

(1) Ծննդոց. Բ. 20։ (2) Եսայեայ. խԶ. 9, և 10։
(3) Հռովմայեցւոց Ը. 2։

ղոս ասէ ։ Եւ եթէ՝ (1) տեսանեմ այլ օրէնս
զինեալ հակառակ օրինաց մտաց , և դե-
րեալ զիս օրինօք մեղաց՝ որ են յանդամս իմ ։
Արդ ոչ եթէ ներքսածողականք են մեզ
մահու և ապականութե . քանզի քաղցն և
տրտմութիւն և այլքն ամենեքին , և կամ
ինքեանք սոքա ապականութիք իցեն . այլ 'ի
ձեռն առնլոյ առաջնորդականին , ոպ̃ երկ-
րագործն զսերմանսն՝ (2) սերմանելով նա-
քօք առ մարմին՝ 'ի մարմնոյ անտի հնձեսցէ
զապականութի . և սերմանելով 'ի հոգին՝
'ի հոգւոյ անտի հնձեսցէ զկեանսն յաւիտե-
նից ։ Ո՛չ էր ինքն տրտմութին մահ , (3) այլ
աշխարհի տրտմութիւն ներգործէ զմահն .
իսկ որ ըստ այ տրտմութին է՝ անզղջականին
հանդիպեսցի փրկութե ։ Եւ ոչ այս միայն ,
այլև որ փոխանորդենն զնոսա հակակայքն՝
նոյնաձևապէս իմն երբեմն առ կեանս և եր-
բեմն առ մահ պարաբերելով ածանին . քան-
զի ուրախութեամբ փոխանորդէ տրտմու-
թին՝ և զուրախութին՝ որ չարութն է շա-
րամանեալ (4) ասա սուգ և տրտմութիւն 'ի
բաց հալածել սպառնայր մեծն յակոբոս . (5)
ծաղր ձեր ասէ 'ի սուգ դարձցի , և ուրա-
խութի ձեր 'ի տրտմութիւն . և նոյնն այս-
ոճիկ ուրախութիւն՝ որ առ ած սիրոյն ըն-
դարձակեալ հոգւոյն , (6) յամ ժամ ուրախա-
նալ հրամայի 'ի պօղոսէ ։ Այնպէս և ու-
տելն՝ որ յորկորստութեն է , դարուլի . իսկ
այն՝ որ ածայինն փառացն է լուսոյն՝ սեղանն ,

բա-

(1) Հռ. Է. 23 ։ (2) Գաղ. Զ. 8 ։ (3) Բ. Կոր. Է. 10 ։
(4) Աւփ. յօրինակին. *** ։
(5) Յակ. Դ. 9 ։ (6) Փիլիպ. Դ. 4 ։

բարեբանեալ լինի , ըստ նորին իսկ առաքե-
լոյ բանից . (1) եթէ ուտիցէք ասէ , եթէ ըմ-
պիցէք , զամ՟ ՚ի փառս այ՟ արասջիք :

Արդ յայտ է յասացելոց անտի՝ և մի նա-
խաստեղծին ասել , թէ ցորքան զպատուի-
րանապահութ՟ն թեւակոխեր , (2) նոքումբ
այսոքիւք բնաւորականօքս ընդդիմամար-
տեալ ՚ի բաց յինքենէ հալածեր զմահն և
զապականութ՟ի . և այն (3) յարտեւողագ՟յն
գոյացութ՟ն՝ անձառելեաց երթեալ հան-
դիպանայր կենաց : Իսկ յորժամ առ պատ-
ուիրանազանցութիւն ՚ի վայր սողոսկեալ ան-
կաւ , յորմէ և մեղացն եղև բողբոջ , յայն-
ժամ ընդ լծով մահու և ապականութեան
մտեալ հնազանդիւր : Եւ այսմ՝ ոչ ստեղ-
ծիչն , և ոչ ստեղծեալն ՚ի նմանէ , այլ ինք-
նակամութ՟ի ստեղծուածոյն և պատրանք
բանսարկուին զմահն և զապականութիւն ՚ի
մերումս յարադրեաց բնութ՟ : Բայց սակայն
դժուարաշարժ առ մեղսն յայնժամ , և դիւ-
րաշարժագոյն առ բարին . որ և այժմիկ յա-
պականացուս անկեալ կեանս՝ հակառա-
կաւն այսոցիկ վտանգիմք , դիւրաշարժ առ
մեղսն , և դժուարաշարժ առ առաքինու-
թիւն փոփոխելով :

Եւ զայս այսպէս՝ որպէս յընթացման ըմ-
բռնեալ բանիս՝ քոյինն սակս բանի . զի (4)
զնոյն ինքն բնաւորականս՝ ապականութ՟ի
թարգմանեցեր . ոչ միայն որք ընդ մարմ-
նումն են յարահիւսեալ՝ աշխատութիւն , և

քաղցն ,

(1) Ա . Կորնթացւոց . Ժ . 31 :
(2) Նոքումբ . այսպէս յօրինակին :
(3) Յարտեւողագոյն . յօրինակին . յարտեւողագոյն :
(4) Զնոյն . յօրինակին . նոյն :

քաղցն, և քունն, այլև որ յոգւոյ են ե-
ռատեսակ մասունք, խոհականն, և ցան-
կականն, և ցասմնականն. որք են ոչ այլ
ինչ, այլ բնաւորականք, և բնութիւնք մարդ-
կային կազմածիս, հակառակամարտք զին-
եալք պատուիրանապահութեն առ մահն և
ապականութի. իսկ 'ի պատուիրանազան-
ցութենէն՝ վահանընկէց լինելով մահն եղա-
նին թշնամեացն։

Որդ. զի երևեցոյց բանս՝ ոչ մեղք և ոչ ա-
պականութիւնք հոգեկանացն և մարմնակա-
նացն մերոց լինել կրից, այլ որակք սմանք,
և որակութիւնք մարդկայնոյս պատշաճեալ
գոյացութեան. զի՞նչ զարմանք են, թէ՝ և
փրկիչն սոքօք 'ի կենցաղավարեն է մարդ-
կան վարեցաւ՝ ուրանօր և կամեցաւ և յոր-
ժամ և որքան. ոչ յօտար յեղանակաւ և
կամաստուերաւ իւիք, այլ ճշմարտութ.
և զմերն իսկ առաջի արկանելով բնաւորա-
կանս՝ թուղացուցեալ (1) մարմնոյն կրել
զիւրսն։ Որպէս սր. գրիգոր ասէ նիւսացի.
(2) Քանզի անսուտն ասէ զ.քառասուն օր
մնացեալ՝ յետոյ քաղցեաւ. և եւ՝ յորժամ
ախորժեաց՝ բնութեան զիւրն կատարել։
Նա ուրեմն ըստ օրինի մարմնոյն իւրոյ՝
զոր 'ի մէնջն ընկալաւ, զմերն կրէր կիրս.
և ոչ ըստ ածութեն, որպէս քեզ թուի ա-
սել։ Զի եթէ ըստ ածութեան հնար էր
զմարդկայինս կրել քու, ապա թերևս և
ոչ մարմին (3) էր զգեցեալ 'ի կուսէն 'ի մեր-
մէ

(1) Մարմնոյն. յօրինակին. մարմնոյն։
(2) 'Ի Դ. ճառն յաղագս երանութեանց։ 'Ի ա. հատո.
յն. և լտ. գործոց նորա. յերես 792։
(3) Էր. յօրինակին. է։

մէ ընութէս, այլ զնոյն զնախահարց ներ-
պահեալ զերևութական տեսութի. ոմն և
առ աբրահամու եկեր, և ընդ յակոբայ
եղև կռուակից. զադամ և զկայէն անգի-
տաբար հարցանէր: Իսկ եթէ այն՝ նմանու-
թիք և օրինակք էին ճշմարտութեան. իսկ
այս նոյն ինքն ճշմարտութիւն և ոչ օրինակ.
ապա յայտ է ուրեմն, թէ ճշմարտութի էր
և երևումն, ճշմարտութի էր և երևեալն.
ճշմարտութի էր և կրեալն, ճշմարտութիւն
էր և կիրքն: Նաև թէպէտ և աստուածային զօրու-
թիւն կարօղ է և 'ի նմանութենէ զճշմարտու-
թիւն պահել, որպէս ասաց ոմն 'ի մէջ մերոց
գրիգորիոս, (1) սակայն առ վերջնումս զա-
ռաջինսն յիշեցեալ զերևմունս և զկիրս՝
նմանութի և օրինակ զնոսա ասել է, և
ոչ ճշմարտութի: Իսկ ճշմարտութի կոչեմ
զկիրն, և ոչ զանունն միայն: Արդ որպէս
իր է երևելն 'ի կնոջէ, իր ուրեմն էին և
ներգործեալքն 'ի նմանէ և կրեցեալքն:
Նաև որպէս զմարմին բանին ոչ յայլմէ իմե-
քէ ծանեաք, այլ 'ի կուսէն, այսինքն 'ի
մարդկային զանգուածոյս, նոյնպէս և ըզ-
կիրսն մարդկայինս զոր մեզ և զմերն ասեմ
կրեալ քնի, և ոչ աստուածայնոյ և կամ այլոց
ուրուք: Որպէս և մեծն գրիգոր ասէ նա-
զիազու: (2) Արկին էր՝ ըստ որում վասա-

կե-

(1) Յագաթանգեղոսն տպ. յեր. 139. բայց բերեալն յիմաստասիրէն՝ է զոր իմաստից, ուր զոր բառիցն փոքր մի այլազգ է այսպէս. *Այլ նա բաւական է նմանու- . թիւք ճշմարտութեն ցուցանել:||

(2) 'Ի ճառն աստուածայայտն. և ծննդ. զոր յն. և լտ. ճառ. լԸ: Բայց արժան է գիտել, իբր զի յօրինակին յայսմ վայրի գրեալ էր փոխանակ Արկին բառիս՝ [illegible]. որ

կեցան, և երկեան, և արտասուեցին, և քաղցեաւ, և ծարաւեցաւ օրինօք մարմնոյն: Կրկին ասելն՝ զնա բանն, և զնորայն յայտնեաց մարմին. և օրինօք մարմնոյն ա֊սելն՝ ըստ մարդկութեան, և ոչ ըստ ածութեան նշանակէ կրել զկիրսն: Որ դու և ոչ զմի ոք յայդցանէ կարես առնուլ յանձն. յաղագս որոյ զնոյն ինքն ընքեան զմարդ֊կային կազմածս մեղս ասացեր դոլ:

Որմէ առաւելաշնորհն սեւերիանոս ասէր զաբաղացւոց եպսն 'ի տնօրէնութե փրկչին բանի. (1) Անչարչարելին ասէ չարչարի չարչարելեաւն. ոչ ընդ այնու կարեօք ե֊մուտ՝

յայտնի վրիպակ է, զոր և ուղղագրեցաք, ոչ միայն հայելով 'ի բնագիրն յունական ուր գնի διπλοῦς [illegible], այն է կրկին, (ըստ որում է և 'ի հայկական օրի֊նակս Ճառից ածաբանին,) այլ և 'ի բանս իմաստասի֊րին, որ զկնի՝ ասէ. * Կրկին ասելն՝ զնա բանն, և զնո֊րայն յայտնեաց մարմին: ||

(1) Ամբողջ Ճառն սեւերիանոսի՝ (յորմէ առնու 'ի վկայ֊ութիւն իմաստասէրն,) կայ առ մեզ թարգմանեալ 'ի նախնեաց. բայց յանուն սեբերիանոսի Եմեսացւոյ: Այլ քննելի առ մատենագիրս այլոց ազգաց, և 'ի գաւազանագիրս եպիսկոպոսաց, ոչ զոք գտաք սեբերիա֊նոս կամ սեւերիանոս անուամբ եպս Եմեսու, մանա֊ւանդ 'ի Դ. և 'ի Ե դարու, առ ժամանակօք անոմեան և մակեդոնեան հերետիկոսաց՝ ընդդէմ որոց մանա֊ւորապէս մաքառի հեղինակն Ճառից մակագրելոց յա֊նուն Եմեսացւոյն. և ոչ իսկ մարթ է կարծել թէ նոյն իցէ ընդ սեբերիանոսի Եւսեբիոսն Եմեսինեան՝ զոր 'ի թիւս թշնամեաց սրբյն աթանասի՝ յարիանոսացն իմբէ համարին մատենագիրք. ապա մնայ ասել՝ թէ սեբե֊րիանոս կմ որ նոյն է սեւերիանոս հեղինակ Ճառիցն՝ է եպսն գաբաղու առ ժամանակօք յովհաննու ոսկե֊բերանի. որոյ կան և այլ գրուածք տպագրեալք 'ի գործս ոսկեբերանի, ոչ ինչ օտար ըստ վարդապետու֊թե 'ի Ճառիցն՝ որոց թարգմանութիւնն կայ առ մեզ 'ի նախնեաց: Այսմ կարծեաց ընծայէ հաստատութիւն և իմաստասէրն մեր, որ հնագոյն ևս օրինակօք վարե֊

մնա՛ որ 'ի մեղմն տանիցին , այլ որ զհա-
սարակաց բնութիւս պատեալ է ։ Քանզի ոգի
և մարմին ծառայեն կարեաց՝ որ 'ի մեղմն
տանին , և այնց կարեաց՝ որ արտաքոյ քան
զմեղմն իցեն . այսինքն քաղցնուլն և ծա-
րաւելն , և վաստակելն և ննջելն՝ մարմնոյն
կարիք են , այլ ոչ եթէ 'ի մեղս համարեալ
իցեն . իսկ պոռնկութիւն և պղծութիւնն և
(1) հակառակութիւն՝ այն կարիք մեղաց են ։
Նոյնպէս և ոգի ունի պատեալ զիւրև կա-
րիս՝ յարարչէ բնութեան ընկալեալ զօգտա-
կարն և զկարևորն , զերկիւղն և զտրտ-
մութիւնն և զցասումն ։ Իսկ եթէ լոկ ա-
ռանձինն քննիցին , կարիք կոչին . իսկ չա-
փով և ըստ ժամանակի՝ օգնականութիւն
են բնութեանս ։

Զայս ասաց , և 'ի վերայ եբեր՝ ասելով .
Զկարիս մարմնոյ և ոգւոյ՝ որ արտաքոյ
քան զմեղմն իցեն , կալաւ յանձին կենա-
րարն . քաղցեաւ ըստ մարմնոյ , ծարաւեցաւ ,
վաստակեցաւ , ննջեաց . և այնու ոչ եթէ
զմեծութիւն իւր թշնամանեաց , այլ վասն զմար-
մնոյն

լով՝ զերկուս 'ի ճառից անտի ըստ է՝ զերկրորդն և զիններորդն՝ գաբաղացւոյն ընծայէ . այլ և ոմանք 'ի լատին քննչաց զեօթներորդ ճառն՝ որ տպագրեալ է 'ի Ը . հատ . գործոց ոսկեբ . յեր . 568 . ընծայեն սեւերիանոսի գաբաղացւոյն ։ Այսչափ ինչ վասն հեղինակի ճառիցն՝ յորոց առնու վկայութիւն իմաստասէրն . իսկ առաջիկայ համառօտ , որպէս և որ զկնի՝ է 'ի Ը . ճառէն , որոյ մակագրութիւն ըստ նիւթոյն՝ է ըստ բերելոյ իմաստասիրին՝ * Բան ( կամ Ճառ ) 'Ի ԾՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ , || որ յօրինակն մեր պակասի ։ Իսկ սկզբնաւորութիւն ճառին է * Զորդիս լուսոյ լուսաւորեն լուսոյն ճառագայթք ։ ||
(1) 'Ի մեր օրինակն ճառից սեբեր . * և պղծութիւն և անառակութիւն՝ որ զմարմնոյ գեղեցկութիւն պղծեն , այն կարիք մեղաց են ։ ||

մնոյն բնութիւն ճշմարտութե̃ յայտնելոյ ։
Նոյնպէս և ըստ շնչոյն՝ երկեաւ, տատամսեցաւ, տրտմեցաւ. (1) տրտում է ասէ շունչ իմ մինչև 'ի մահ. և դարձեալ թէ՝ սկսաւ տրտմել և հոգալ. և այն չէին կարիք մեղաց, այլ բնութե̃ մարմնոյն ծանուցիչք ։ Եւ դարձեալ ասէ (2). Զի յառաջագոյն կարկեցէ զբերանս հերձուածողացն, և յայտարասցէ՝ թէ զայս մարմինս զգեցաւ, որ է̃ բազում կարեօքս մտանէ, որ զանգիտէս 'ի չարչարանաց, որ դողայ (3) 'ի բռնութենէ մահու, որ խուսափի և տրտմի ընդ վախճան կենաց ։

Ահաւասիկ յայտնի բանիւ երևեցոյց մե- հայրս՝ ոչ միայն գոլ մեղաց և ապականութեան, որ 'ի մեզ գտանին կիրքս, այլ բնական մարմնոյ և ոգւոյ կարիք. առ որս կամաւ և ըստ կանխատեսութե̃ խորհրդոյ յայնոսիկ խոնարհէր տէրն, և ոչ եթէ բռնադատութե̃ զփրկչականն զիւրեամբք ածել կարէին զմարմինն. զի այս սակ մար-



(1) Մատթ. իզ. 38. և 37 ։ Շունչ դնի աստ նշանակութիւն հոգւոյ, որպէս յիշատակեցաք 'ի վերոյ 'ի 2. ծանօթութեն յեր. 14 ։

(2) Այս հատուած կայ 'ի Թ. ճառն սեբեր, որոյ մակադիրն է՝ * 'Ի բան աստուածայինն որ ասէ՝ հայր եթէ հնար իցէ, անցցէ յինէն բաժակս այս. բայց ոչ որպէս ես կամիմ, այլ որպէս դու. || և սկզբնաւորութիւնն է, * Յորժամ մեզ. եղբարք, վս̃ ողորմութե̃ քարոզէին օրէնք ։ || Զայս բան յանուն սեւերիանոսի գաբաղացւոյ առնու 'ի վկայութն և ժողովն հռովմայու առ ա̃. մարտինոսիւ̃ քահանայապետիւ̃, ընդդէմ միակամեդաւան հերետիկոսաց՝ որք ուրանային զմարդկային կամս 'ի քս̃ ։

(3) 'Ի բնութենէ. այսպէս է և 'ի բանս սեբեր. ուր 'ի մեր օրինակն իմաստասիրին գրեալ էր վրիպակաւ 'ի բնութենէ ։

գոյ է՝ բնականացն 'ի հարկի կալ ծառայութեան կարեաց ։ Իսկ բանն ած̃ ը̃ ինքեան անքակաբար զմերն միաւորեաց ։ յորժամ կամէր ինքն, յայնժամ ակնարկէր մարմնոյն իւրոյ յառաջ ունել զբնականսն, առ 'ի ճշմարտելոյ զբովանդակն ընդ ինքեան միաւորել զմարդկայինն զոգի և զմարմին ։ Որպէս հրաշալին ասէ յոհան կոստանդնուպօլսի (1) ։ Եւ զխմորդ այդուցն քաղցնոյր ։ յորժամ կամէր և թոյլ տայր ասէ մարմնոյն, յայնժամ զգայր իւրոյ կարեացն ։ Եթէ այդպէս է ասեն, ապա փոփոխելի էր քս̃ ։ երբեմն տկարանայր մարմինն՝ թոյլ տալով նմա բանին, և երբեմն զօրանայր՝ ընկալեալ 'ի բանէն ։

Դարձեալ թիւրահաւատք առ 'ի թիւրել յանդգնեալ զհաւատս ուղիղս ։ Օ ի՞նչ ասես և զմեռանելն վս̃ մեր (2) զք̃սի ։ Եթէ ըստ քեզ է, կամ մեռաւ՝ և փոփոխեցաւ ։ և կամ թէ ոչ փոփոխեցաւ, և մեռաւ ոչ ։ Ապա եթէ և՛ մեռաւ, և ոչ փոփոխեցաւ, ըստ նմին և՛ ընկալաւ զկիրսն, և ոչ այլայլեցաւ 'ի կրիցն ։ և որպէս 'ի մահուն զմերն ընկալաւ զմահ, այս է՝ որոշեալ զշունչն 'ի յիւրմէ մարմնոյն, սապէս և 'ի կրեն՝ մերումն նոյնաձևապէս հաւասարեաց կրից ։ Որպէս սբ̃ն բասիլիոս ասէ յառ գոհութե ճառին՝ ասելով (3) ։ Արդ որպէս ընկալաւ

զքաղց

(1) 'Ի մատթ. ճառ. կէ. Ը այլոց կը ։ 'ի տպ. յն. և լտ. հատ. Է. յեր. 662 ։ կայ հայերէնն և 'ի ճառընտիրս ։
(2) Զե̃. յօրինակին՝ վս̃ ։
(3) Զայս բան սբ̃յն բարսղի 'ի ճառէն գոհութե՝ բազումք ասենն 'ի վկայութի յայս նիւթ ։ այլ քանզի հայկական հին թարգմանութիւնն է կարի մթին ։ նո-

զքաղցնուլն որ՝ հաստատուն կերակուրն ընչեցեալ 'ի նմանէ, և զծարաւեն իրաւացոյց (1) խոնաւութեան ծախեցելոյ 'ի մարմնին. և վաստակեաց՝ մարմնոյն և ջղացն յուղեգնացութէ ձգեցելոյ. ոչ ծնութեան աշխատութ տաժանեցելոյ, այլ մարմնոյն՝ որ 'ի բնութեն յարմարագոյն է՝ զպատահումն ընկալաւ. նոյնպէս և զարտօսրն իրաւացոյց, զընական լինել 'ի մարմնի զպատահումն թուղացոյց: Որպէս 'ի սէս հայրն:

Սաստիկ յոյժ է՝ թէ հաւաստապէս բնականացն թոյլ տուեալ՝ զանցնիւրմն իրողութեան իւրն անապականապէս աղդել մարմնի և հոգւ՝ ինքնիշխանական կամօք՝ յորժամ և կամեցաւն. ոչ անուանն և ձևոյն ևեթ, այլ առաւել իրացն՝ որոց և անունն՝ յիւրաքանչիւրմն զիւրմն համբերեալ. և այսր աղագաւ զմերն ասի ընդունել զկիրս: Որդ և ըստ մեզ, եթէ ոչ յոյժ դայթագղեսցիս բանիւս զապականութեն ընդ միտ ածելով տեսակս. քանզի ես զընականացն ասեմ բուռն հարկանել զքն. դու զանբնականսն 'ի

բոդ թարգմանութբ 'ի յունական բնադրեն դիցուք ատտմնօր. * Արդ ո՛ր զքաղցն յանձն էառ որն յաստուելն անդ պհաստատուն կերակուրն, և 'ի ծախել
« խոնաւութեն մարմնոյ՝ ընկալաւ զծարաւն, և 'ի կա-
« րի ձգտել մկանանցն և ջղաց յուղեգնացութե անդ՝
« վաստակեցաւ, ոչ եթէ ծնութեն ներքոյ անկանե-
« լով վշտացն, այլ մարմնոյն ընդունելով զկիրսն՝ որ
« մանդամ իւրումն հետևեցան բնութե. այսպէս և
« զարտասուս յանձն էառ, թոյլ տալով պատահել
« մարմնոյն բնաւորական կրից:||

